

ՀԱՐԵՎՈՆ ԴՐԱՀԱՆ

ՅՈՒՆԻՍ 2014

ԳԱՆԻԷԼ ԱՐՍԱՆ

ԱՅԴՊԻՍԻ ՄԻ ԱՊՐԻԼ ԱՄԻՍ ԱԴԱՆԱՅՈՒՄ ՀԱՏՈՒՎԾ ՎԵՊԻՑ

(Daniel Arsand — Un certain mois d'avril à Adana, Flammarion, 2011, prix Chapitre du roman européen 2011)

ԹԱՐԳՄԱՆԻՉԻՆ ԿՈՂՄԻ – Արսան՝ գրչանունն է: «Հօրս ազգանունը Արավանձեան էր, նա իր մանկութեան ու պատանեկութեան մասին չեր պատմում հաւանաբար ցաւատանց յուշերը բորբոքել չեր ուզում: Ես պատահաբար եմ իմացել, որ հայրական պապիս ու նրա հօրը 1915-ի ապրիլին կացնով կառափնատել եմ»:

Արձակագրի առաջին խև վեպը՝ «Խաւարի գաւառը», արժանացաւ «Ֆեմինա», երկրորդը՝ «Լոութեամբը», Ժան Ժիոնոյի անուան գրական Մեծ մրցանակին: Դաճիկ Արսանը բազմաթիվ վեպեր ու պատմուածքների ժողովածուներ հրատարակելուց, անգերեն, իսպաներեն, կատարենարեն, յունարեն, գերմաներեն, պորտուգալերեն, իտալերեն թարգմանուելուց յետոյ, 60 տարեկանում իրեն պատրաստ զգաց ու գրեց «Այդպիսի մի ապրիլ ամիս Արանայում», վեպը, որն իսկոյն լայն արձագանք գտաւ, հայերի դեմ հրահրուած հրէշգործութիւններին անդրադառնալու նոր առիթ դարձաւ:

Վեպի գրական արժանիքները բարձր են գմահատել ֆրանսիայի անուանի գրականագիտները, դրուստական յօդուածներ հրապարակել «Մոնդը», «Էքսպրեսը», «Տեղեռաման», ձայնապիտուի ու հեռատեսիլի բազմաթիվ կայսերական հաղորդումներ են նուիրել:

40

Իսֆանդիարի հրոսախոսմբը ամայի կածանների ելուզակների ու սանձարձակ ստահակների խառնամբով էր: Ստոր ստահակների, որոնք իրար հետ էին միայն բիրտ ու յանդուգն դառնում: Նրանք հաւանոցները զրկում էին լաւագոյն ածաններից, ամենագէր աքաղաղներից: Յանկացած աղջիկ, որ նրանց հանդիպում էր մթնչաղին, անվնաս չեր պրծնում: Քրիստոնեայ լինէր, թէ հրեայ, ստիպում էին չուել ազդրերը: Խնայում էին միայն մահմեղական կոյսերին, գոհանում էին ահաբեկելով՝ քրքջալով ու յետոյյըներին տալով: Նրանք թալանում էին միրգ ու բանջարեղէն, իրենց կեղտոտ, վէրքոտ ոտքերով ասպատակում էին բան-

ջարանոցները: Վայրենացած շներից վատթար էին: Նրանց յիշոցները գարշելի էին ու յոխորտ: Իրենց միայն մի բան՝ սպանութիւն թոյլ չէին տալիս: Թոկի ծայրին ծօճուելը շատ կը կարծացնէր իւրաքանչիւրի կեանքը: Ուստի բաւարարուում էին սոսկ անփոչեմ, անհաւատարիմ կանանց կողոպտելով ու փէշերը բարձրացնելով: Յամենայն դէպս մտավախութիւն ունէին, որ այս կամ այն թալանի համար մի օր իրենց աջը կը կարեն: Գիշերները հաւաքւում, քնում էին բաց երկնքի տակ, երբէք նոյն տեղում չէին մնում, իրենց վարձկաններ էին պատկերացնում: Պատերազմելը նրանց սրտով կը լինէր: Ականջներով ընկել էր, որ կայսրութեան վերածնունդը մօտ է: Բանակի շարքերն անցնելը սպանելու իրաւունք կը տար:

Ո՞վ էր այդ տիպը, որ անհոգ քայլուածքով, անփոյթ

ԵՐԿՈՒ ԿՈՐՈՒՏԸ

Անցնող մէկ ամսուան ընթացքին Սփիտքի գրական աշխարհը երկու կորուստ արձանագրեց. Նախ՝ մայիսի վերջերուն մեզի հրամեշտ տուաւ բանաստեղծուի Ալիսիա Կիրակոսեան, ապա, երեք շաբաթներ շանցած, ստացանք նաեւ գրող, գրականագէտ, խմբագիր, հրապարակագիր... կարճ խօսքով՝ մտաւորական Պողոս Սնապեանի գոյժը:

Մեր փոքր ածուի մէկ փոքր մասին՝ Սփիտքի գրական աշխարհին համար ծանր է մէկ ամսուան ընթացքին երկու կորուստը: Այս թիւով աշխատեցանք անդրադառնալ անոնց կենսագրութեան, ինչպէս նաեւ տեղ տուինք մեր աշխատակիցներէն մեզի հասած երկու գրութիւններու, սակայն այդքանով մեր պարտքը փակուած չենք համարեր, եթէ երբէք նման հասկացութիւն կրնայ ըլլալ:

ԽՄՔ.

շարժումներով իրենց է մօտենում:

Աղալու միս:

Նրանց արիւնը տաքանում էր: Այդ երեկոյ տղան էլ աղջկայ տեղ կ'անցնէր:

Իսֆանդիարը՝ աւագակախմբի միահեծան պարագ-լութը, վարժ պատեցնում էր մահակը:

Մի ակնթարթում, առանց խօսք փոխանակելու, նրանք կանգնեցին կողք-կողքի՝ դժնղակ պատ կազմեցին: Ելու-զակները վեցն էին ու վեցն էլ ցցել էին կզակները, որ ծեծուուք, հակառակորդի ճամբարում ջախջախում էր նշանակում: Նրանք փակեցին Յովհաննէսի ճանապարհը: Տղան մի կողմ ցատկեց: Դաշտերը երեւի պատսպարէին իրեն: Բայց հրոսակները առանց ճիպի հասան հետեւից՝ պող-պատէ ոտնամկաններ ունէին: Նրանք շրջապատեցին տղա-յին ու օղակը, որ կազմել էին, սեղմուեց: Քարացած, յու-զումնահեղձ, Յովհաննէսը միզեց տակը: Ցետ կամ առաջ գնալ՝ նշանակում էր դիպչել նրանց, որն իր նողկանքը կը յարուցէր: Ելուզակներն ուզում էին տղային, աղահ ձեռ-քերով, չուռած մատներով բռնեցին: Յովհաննէսը փորձեց ոտքի հարուածներով պաշտպանուել, բայց մէկը քաշեց աջ, միւսը ձախ թեւքը, երրորդը գօտին, չորրորդը՝ ըլուզի փէ-շը, հինգերորդը՝ անդրավարտիքը: Վեցերորդը՝ Իսֆանդիարը, բուռն առաւ մազերը: Դա նրա՝ զոհին շոյելու ձեւն էր: Ստահակները նրան չոքեցրին, աղան դիմազրեց, բայց չկարողացաւ ճիրաններից դուրս պրծնել: Դէմքով հողին պառկեցրին, այդպես պահեցին: Իսֆանդիարը թիթեւակի կսմթեց պատանու այտը, ով համակերպուած չէր թւում: Նա անզուսք ու անհնազանդ թափ տուեց գլուխը: Աւազա-կապետի ձեռքն իսկոյն յետ քաշուեց, բարձրացաւ, ապտա-կեց: Ապտակները հաջորդեցին իրար: Մահակի մի հարուած սրունքին իջաւ: Գօտին քաշել-հանել էին, շաշեցրին ուսեւ-րին, կոնակին: Վերջապէս կարողացան ուժասպառ անել: Բուռնցքի մի հարուած քունքին ճզմուեց: Տղան մաղձ որձ-կաց: Ու յետոյ պատկանեց իսֆանդիարին:

41

Մի՛ շարժուիր:

Նա կիսաբացեց աչքերը: Ո՞չ ստոր արվամոլ, ո՞չ էլ բարի սամարացի էր հակուել վրան: Զայնը, որ աղերսում էր, ներսից էր՝ հրեշտակային հեզութիւն ունէր: Մութը պարուրել էր մարմինը, տարածուել դաշտերի վրա: Ճա-կատից արիւն էր հոսում, հոսում էր մինչեւ շրթնանկիւնը:

Մի՛ շարժուիր:

Նա չանսաց այդ ձայնին, չարուեց երկու կարճ բա-ռերին, որոնք, սակայն, նոյնքան ազգեցիկ էին, որքան մայրական բալասաններից մէկնումէկը: Ուրեմն՝ շարժուեց: Ոտքերից մէկը ծալեց յետոյյքի կողմը՝ ասես փշրուած ապակի մտաւ մարմինը: Բայց ոտքը կոտրուած չէր: Նոյ-նը միւս ոտքով արեց, արդիւնքը համանման եղաւ: Ցե-տոյ ձեռքերը մարմնով սահեցրեց: Տարուբերեց մատները, որոնք միջատի բեղիկների նման դողողում էին, ձգւում, չօշափում: Ոչ մի կոտրուածք: Նա անվնաս էր, բայց՝ պղծուած: Վեց տղամարդ պառկել էին վրան, ունեցել: Բերանը պինդ փակած, ծնունները սեղմած, զգուշութեան ու ցաւի պարտադրած դանդաղութեամբ ոտքի ելաւ: Աստի-

ճանաբար շարժուելով, գիշերուան դէմ-դիմաց կանգնելու համար ճիպ գործադրելով, ամեն ինչ յիշեց, հասկացաւ, որ լաց է լինում ու զգաց՝ մէջն արդէն վրեժխնդրութեան մի անդիմադրելի պահանջ է ահագնանում:

Ինքը նրանց սերմնահեղուկի, քրքիջների, հեւքի, գարշահոտութեան յաւերժական գերին էր լինելու:

Հենց յաջորդ առաւոտ վալիից արդարութիւն կը պա-հանջէր:

Քարշ եկաւ մինչեւ տուն: Նրան տեսնելով՝ մայրը ճչաց: Նետուեց դէպի որդին, բայց նա մօր՝ խանդալա-տանքով իր մարմինին փարուած ձեռքերը հեռացնելու ուժ չունեցաւ: Մինչդեռ չէր կարողանում հանդուրժել, որ իրեն դիպէկն:

Բոնաբարութեան ոչ մի մանրամասնը չթաքցրեց մօրից:

Ոչ ոք չի իմանայ, որդիիս:

Տղան մրմնջաց, որ վստահում է վալիի անկողմնակա-յութեանը:

Թուռքը քեզ չի հաւատայ, դու քաղաքի ծաղրի առարկան:

Դա գու ես ասում, մայր:

Կարինէ Պետրոսեանը կաթսայով ջուր եռացրեց, բայց այն պահին, երբ պատրաստփում էր լուանալ որդու մար-տիրուացած մարմինը, տղան ահաբեկուած շարժում արեց: Ոչ, ասաց, ինքս կը լուացըուեմ:

Սիրելի՛ս՝ մայրը որդուն թողեց, որպեսզի գնայ նայի աստղերին, նրանք լաւ խորհրդատուներ էին:

42

Արեւակնային մի վարդագոյն տարանջատեց երկինքն ու հորիզոնը: Այդ վարդագոյնը սովորաբար բոր-բոքում էր Յովհաննէս Պետրոսեանի զգայնութիւնները: Աշխարհը նրան սկսում էր թուալ լայն, ինքը մի օր գնալու էր բացայայտեր: Բայց այդ չորեքշաբթի առաւոտ նա բա-նի տեղ չէր գնում անսահմանութիւնն ու փայլատակում-ները, որոնց ուզում էր հասնել: Մինչ մայրը խառնում էր վրան մեղր լցրած ձաւարէ շիլան՝ շարժւում էր երերուն: Խրճիթի միակ հայելում իրեն տեսաւ, գտաւ, որ տգեղ է, գէմքը՝ արնազեղումից կապտած, դիմագծերը նախորդ օրը ստացած հարուածներից ձեւախսիտուած են: Նրանց դա յաջողուել էր՝ իրեն այլանդակել էին: Հրաժարուեց շի-լայից: Այդ խառնուրդն իրեն տհաճ էր՝ մայրն այդքանը չէ՞ր հասկանում: Իրենց երկուսի միջեւ առաջին անդամ խզում գոյացաւ: Մայրը տղային թլում էր թոյլ, խղճալի ու անխոհեմ, աղաչում էր վալիի մօտ չգնալ, հատուցում չպահանջել: Կարինէն կանգնեց տղայի առջեւ, Յովհաննէ-սը նրան հեռացրեց ճանապարհից: Գլխիկոր, զղագրիփու ու գնուական տղան հալուեց օրուայ յորդ լոյսի մէջ:

43

Արդարութեան ծարաւն աւելի հրամայական էր, քան մարմնում գալարուող ցաւը:

Ես կը հասնեմ արդարութեան, ես ասելիք կը դառնամ:

Նա չգնաց, ինչը ողջամիտ կը լինէր, Մուշեղ եափ-կոպուի, փաստաբան Թորոս Վերամեանի, ինչո՞ւ ոչ՝ բա-նասեղձ Տիրան Մելիքեանի աջակցութիւնն ու կարծիքը

Հայցելու: Վալիի անկողմնակալութեան նկատմամբ նրա վստահութիւնը զայրոյթը մեղմում, յոյս էր ներշնչում: Նա սքանչելի էր իր ինքնավստահութեամբ: Յամառ ու կռուարար վայրենի: Ճեղքեց Սեւատ բէյի կացարանի առջեւի հսկիչ-պահապահների պատնէշը, վզից բոնեցին: Տղան ճշաց ապշահար՝ երեք չէր պատկերացրել, որ իր հետ այդտեղ կարող են վատ վարուել: Խսֆանդիարի մարդիկ նման էին այս նոյն կերբերոսները, նրանք խորը շնչում, իրեն օղակում, արհամարհում էին: Խուզարկեցին:

Զէնք չունեմ:

Օ՛ անտանելի գարշահոտութիւն, որ փշում է ձեր շոշափուկներից (նա այլեւս չէր յիշում կանացի գրկախառնութիւնները):

Ո՞վ ես դու:

Յովհաննէս Պետրոսեանը:

Կանխազգաց, որ մինչեւ վիպասքին հասնելը ճանապարհը երկար է լինելու:

Սենեակի խորքը պարուրող խաւարից թանկարժէք զարդերով պեճնուած մեծաշուր մի տիկին՝ շփոթեցնող սպնարիւնութեամբ մի մոգուհի, այնպիսի մէկը յայտնուեց, ում համար գթասրտութիւնը մեռած տառ էր:

Ո՞վ ես, հարցը:

Տղան կրկնեց անունն ու ազգանունը:

Ես վալիի կինն եմ՝ ահա եւ իմ ամուսինը:

Ի՞նչ ես ուզում ինձնից, անհանգստացաւ Սեւատ բէյը:

Այդ մարդուց Յովհաննէսը մտապահեց միայն կնդրուկ բուրող մի զանգուած, մի լայն բերան, ելուստի նմանուող ծնօտ, յօնքեր, որոնք խոժուուում էին: Բայց ի՞նչը կարող էր վատահութիւն հաղորդել տղային՝ այնքան բառեր էին իր ներսում, իրենից դուրս յորդում:

Անհեթեթութիւնների մի խառնակոյտ, անմտութիւնների շարան, անպատկառ քրիստոնեայի բարբաջանք՝ ահա այն ամենը, ինչ Սեւատ բեյը ընկալում էր յուսահատութեան՝ խելաշեղօրէն երեւակայական պոոթկումից, նզովքներից, անիմաստ հնչելու չափ բարյասիրական դատողութիւններից: Հայի յնորազառանցը վալիի զղերի վրայ ազգում էր: Այդ Յովհաննէսը բոնաբարութիւնը դարձնում էր պատմութիւն, մինչդեռ Աղանայում, մանաւանդ տղաներին, չեն բոնաբարում: Այդ մանչը՝ ատաղձագործի այդ աշկերտը, խելագար էր: Այդ գեղեցիկ պատանին, որովհետեւ նա իրոք գեղեցիկ էր, չնայած այտերն ու ճակատը այտուցուած էին, որն անկասկած ծեծկուուրի հետեւանք էր, արեան բազագորութիւնում անպարկեշտութիւն ուներ: Սեւատ բէյի հայրը, որ նոյնպես վալի էր եղել, որդուն անընդհատ կրկնել էր՝ գեղեցկութիւնը առաքինութեան հետ չի կարող մէկտեղուել, նրա տեղը Աստծոյ ու տուեալ անձի միջեւ է:

Վալին խիստ ու կողմնակալ կեցուածք ընդունեց:

Դու յօրինում ես: Ինքդ ես խառնակչութեան մեղաւորը: Ո՞վ է քեզ վճարել, որ ինձ հրամցնես այդ ստայօդ հերքիթը: Բոնաբարութիւն չի եղել: Խսֆանդիարը, քեզ հետ համամիտ եմ, գող է, եւ լաւ կը լինէր, եթէ ձերքակալուէր, բայց նա քեզ պէս տարօրինակ մէկի վրայ աչք չի գցի: Ինքդ ես արուամոլը:

Խաւարը ինչպէ՞ս կարող է օր ցերեկով թանձրանալ՝ ինքն իրեն հարցուց Յովհաննէսը:

Նա աղմուկ է բարձրացնելու, նախագուշացրեց կինը:

Սեւատ բէյը ճտտացրեց մատները, հսկիչ-պահապանները իսկոյն նետուեցին Յովհաննէսի վրայ, վալիի տեսադաշտից հեռացրին, փողոց շարակեցին:

Տղան ինքն իր մէջ եռեկվում, փողոցի բերանբացների ծաղրուծանակն էր դառնում: Գլուխը կորցրել ցուրթերին այժմ կոշտ-կոպիտ բառեր էին, մոլեգին բառեր: Նա հեծեծում էր, այլագունած էր: Զէր համակերպուելու այս նուաստացման հետ: Առօրեականացած ու լարուած՝ Աղանան բզզում էր չուրջը:

Աղանան դատարան ունէր: Տղան փութաց, որ բողոք ներկայացնի:

Նա պատմեց Խսֆանդիարի եւ միւսների հետ ճանապարհին հանդիպելու, դէպքի ժամմի, իրեն բոնի տիրելու անգութ մոլագարութեան մասին, նա այս ամենը պատմեց գրագրին՝ միաչքանի, իր դէմ արհամարհանքով համակուած մէկին:

Կորի՞ր:

Ինչ որ մէկը քթի տակ թափ տվեց մետաղէ անկիւններով արձանագրութիւնների տեսարը:

Ամեն ինչ վերածուել էր զէնքի:

Որտե՞ղ են դատապաշտպանները: Դատաւորները:

Տակա՞նք:

Ու ինչպես վալիի մօտից, նրան շպրտեցին դուրս՝ բորբոքուած բոցերի ու փոշիների մէջ, մի փողոց, որ երկար, խուլ միջանցք էր յիշեցնուած:

Գետինը ճօճւում էր, արդարութեան ամեն յոյս, հատուցման ամեն հաւատ խամրում էր, ամեն ինչ մութ էր ու վայում էր:

Տղան ուղղուեց հայկական թաղ, որտեղ գտնվում էր Մարտիրոս Սիմոնեանի զէնքի արհեստանոցը: Նա պտտուեց կրպակի չուրջը, բայց չհամարձակուեց մտնել: Նաեւ ծարաւ էր: Մի տանամերձում լոլիկ քաղեց, տանտիկինը հալածեց: Վաղեց, կորաւ նրբանցքներում, պատահաբար նորից յայտնուեց զէնքի արհեստանոցի առաջ, դարձեալ ներս մտնել չյանդգնեց: Ի՞նչ էր իր հետ կատարուում: Ինքը ոչ շուն էր, ոչ էլ խոզ, ինչո՞ւ հետն այդպէս վարուեցին դատարանի կամ վալիի մարդիկ: Ես մենակ եմ ու վրէժն կը լուծեմ ինքն իրեն ասաց նա: Սպանելը իմաստից զրկուած բառ չէ: Վերջապէս որոշեց մտնել Մարտիրոս Սիմոնեանի արհեստանոցը: Գաւազանի պէս չոր, պեպենու գէմքով մի պարոն ընդառաջ ելաւ ու հարցը:

թէ ի՞նչ է ուղարկուած:

Նա քրթմնջոցով միայն պատասխանեց: Նուաստացուցիչ էր այստեղ հասնել ու ամբողջ մարդկութեան հանդէպ չարացած դողդողալ: Ահա այդ պահին հարուածեց պարոնի ծնօտին, որը փլուեց: Ինչ որ մէկը կրպակի անտեսանելի խորքից գոռաց: Յովհաննէսը մուգ փայտէ երկար սեղանի վրայից, արկղիկի մէջ հանդչող սաղափէ զարդանախչերով մի տարածանակ թուցրեց, թոցրեց նաեւ մի տուփ փամփուշտ: Զինուած զէնքով, որն իրեն կանացի թուաց, փախաւ: Արուարձանները հետզհետէ իրենց տեղը դաշտերին զիջեցին...

Ֆրանսերէնից բարգմ.՝ Գր. ԶԱՆԻԿԵԼՆԻ

Մահացաւ բանասեղծուի Ալիսիա Կիրակոսեան


Հինգշաբթի, 22 մայիսին, Լոս Անձելըսի մէջ իր մահանացուն կնքած է բանաստեղծուն Ալիսիա Կիրակոսեան: Ան հեղինակ էր սպաներէն եւ հայերէն բանաստեղծական բազմաթիւ երկերու, նաև հայերէն սպաներէն թարգմանած էր Ռաֆֆիի «Խենթը»:

Պարգևատրուած էր Խաչատուր Աբովեանի անուան մրցանակով:

Ալիսիա Կիրակոսեանի մահուան առթիւ, Հայաստանի գրողներու միութիւնը «Գրական թերթ»ի էջերով հրապարակած է հետեւեալ հաղորդագրութիւնը.

Հայ պոէզիան մեծ կորուստ ունեցաւ. Լոս Անջելեսում 78 տարեկանում մահացաւ բանաստեղծ Ալիսիա Կիրակոսեանը: Ալիսիա Կիրակոսեանը ծնուել է 1936թ. յուլիսի 13ին, Կորդովայում (Արգենտինա), վաճեցու ընտանիքում: Աւարտել է Բուէնոս Այրեսի ազգային համալսարանի Իրաւաբանական ֆակուլտետը: 10 տարի խաղացել է բատրոնում: Այնուհետեւ փոխադրուել է Լոս Անջելէս:

Բանաստեղծութիւնների առաջին գիրքը՝ «Մէկ օրում հինգ ճայն», լոյս է տեսել 1966-ին: Հայ ընթերցողը նրան նանաչեց 1967-71թթ., բանաստեղծ Վահագն Դաւթեանի հրաշալի բարգմանութեամբ հրատարակուած «Արմատ եւ էութիւն» բանաստեղծութիւնների ժողովածուով: Նրա «Պեդրօ Ամոր» (1969) պիեսը բեմադրուել է Բուէնոս Այրեսի «Փայրօ» բատրոնում: Ալիսիա Կիրակոսեանի պոէզիայի բեմատիկ առանցքն են սէրը, մայրութիւնը, հայրենիքը եւ փիլիսոփայական խոհը: Նա գերտարածական կոչուող բանաստեղծական շարժման հիմնադիրն է (տեսութիւնը հրապարակել է խապաներէն, հայերէն եւ անգ-



Ալիսիա Կիրակոսեան Ուիլիլը Սարոյեանի հետ

լերէն): Նրա պոէզիային բնորոշ են ներաշխարհի պատկերները, արդիական լեզուամտածողութիւնը, բանաստեղծական վերախմատառումների ինքնատիպութիւնը: Ալիսիա Կիրակոսեանի որոշ գրքեր նկարազարդել է Պարլօ Պիկասօն: 1993 թուականին Բրազիլիայի Սան-Պարլօ համալսարանում պաշտպանել է դոկտորական ատենախոսութիւն՝ գրականութեան բնագաւառում: Նուրբ, խորագաց բանաստեղծուհու յիշատակը կ'ապրի իր սիրուած բանաստեղծութիւններով եւ երգերի վերածուած հրաշալի ստեղծագործութիւններով:

ՀԳՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Յանկարծ ծփաց

Լոռութիւնը քո զանգակատան,
եւ միայն քո խօսքը մնաց՝
ամբողջացնելու

Կենսանիւթը քո տեսիլքների:

«Յաւդ տանեմ»

Ասում էիր ինձ:
Հիմա, բոլոր ցաւն այդ
Հսկայ հարուածի մէջ հաւաքած,
Մեզ ետ տուեցիր միանգամից:

Որ պարանն անիծեալ
Խեղդեց քո ապագան քեզ
յանձնելու
Ժամանակը յաւետ:

Ի՞նչ արցունքով
Մեծութեանդ գուգահեռ
Կարող եմ արտասուել:

Մենք պիտի վառէինք դեռ

Զահը նոր պատմութեան:

Երազներ պիտի գծէինք՝

Նոր երազներով յղի:

Բայց ճակատագիրը որոշեց

Բացակայութեամբ մեծարել քեզ:

Պարո՛յր, իմ սիրելի՛ս,

Հնդունիր այս ցաւի

համանուագում

Արտասուքը մենաւոր նրանց,

Ովքեր հասկանում են

Տարածութիւնը հոգուդ.

Եւ գիտեն, թէ հրաժեշտիցդ առաջ

Յաղթել էիր արդէն մահուան:

Թող որ այսօր

Ես երգեմ քեզ՝

Յանուն այն խորհրդի,

Որ հաւատամքի է վերածում

Գոյութիւնդ,

Եւ յանուն քո անլոելի

զանգակատան,

Որի զօղանջները սուր

Քայլերգ են դառնում,

Որ ժողովուրդը մեր

Տողանցի անվերջ

Դէպի իդձերը քո,

Տեսիլքը քո,

Դէպի վերագտած հայրենիքը քո:

Թարգմ. Վահագն Դավթեան

Վաստակաւության մասին Պողոս Սնամեան կնիքը իր մահկանացուն

ՀՅԴ Բիւրօն, Համագույշինի Կեդրոնական վարչութիւնը եւ «Բագին» ամսագրի խմբագրութիւնը գումարեցին մահը վաստակաշատ գաշնակցական մտաւորական Պողոս Սնամեանի:

«14 յունիսի առաւօտուն, իր մահկանացուն կնքեց Բագին ամսագրի երկար տարիներու վաստակաւոր խմբագրի, հայ ժամանակակից գրականագիտութեան տիտաններէն, անոր զարգացման մէջ իր ուրոյն ներդրումը ունեցած վաստակաւոր մտաւորական, գրաքննադատ եւ Հայ յեղափոխական գաշնակցութեան գրական անդաստանին մէջ հանրածանօթ հեղինակութիւն՝ Պողոս Սնամեան», գրուած էր Համագույշինի Կեդրոնական վարչութեան հաղորդագրութեան մէջ:

Պողոս Սնամեան ծնած է 11 օգոստոս 1927-ին, Մուսա Լերան Պիթիս գիւղը: Նախակրթութիւնը կը ստանայ ծննդագյրի եւ Այնձարի Յառաջ վարժարանին մէջ: 1944-ին կ'ընդունուի Երուսաղէմի ժառանգութեան վարժարանը եւ կ'աւարտէ զայն 1949-ին: Աւարտելէ ետք, կը վերադառնայ Լիբանան, ուր Այնձարի ու Պէյրութի մէջ կը զբաղի ուսուցչութեամբ:

1950-էն սկսեալ գրական եւ քննադաստական իր գործերը լոյս կը տեսնեն նայիրի եւ Ակոս հանդէսներուն մէջ: Աշխատակցած է նաեւ սփիւռքահայ շարք մը թերթերու՝ պատմուածքներով, տպաւորապաշտ էջերով եւ քննադաստական եւ հրապարակագրական յօդուածներով:

Երկու տարի՝ 1957-ին եւ 1959-ին, լոյս կ'ընծայէ Միջնաբերդ գրական տարեգիրքը:

1962ի յունուարին, Կարօ Սասունիի խմբագրապետութեամբ երբ լոյս կը տեսնէ հայ յեղափոխական գաշնակցութեան նախաձեռնութիւնը հանդիսացող գրականութեան եւ արուեստի Բագին ամսագիրը, Եղուարդ Պօյաճեանի հետ ինք եւս կը կոչուի խմբագրի պատասխանատու պաշտօնին:

1962-ին կը մեկնի Փարիզ եւ Սորպոնի եւ Ալիանս Ֆրանսէզի մէջ երկու տարի իբրեւ ազատ ունկնդիր կը հետեւի գրական եւ իմաստասիրական դասընթացքներու: Վերադարձին շարունակելով «Բագին»ի մէջ վստահուած աշխատանքները՝ խմբագրի պաշտօնը կը վարէ ամբողջ 42 տարի, մինչեւ 2003: Միաժամանակ կը դասաւանդէ հայ գրականութիւն, Այնձարի ու Պէյրութի ազգային երկրորդական վարժարաններու աւարտական դասարաններուն:

1966-էն 1973 մաս կը կազմէ Ազգակ օրաթերթի խմբագրութեան, իբրեւ ազգային եւ գրական-մշակութային էջերու պատասխանատու խմբագրի:

Եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մէջ հաստատուած (1966) Գէորգ Մելիքինեցի գրական մրցանակի դատակազմին անդամ եւ խմբագրած է աւելի քան 50 գրական հատոր:

1983-էն 1989 կ'աւանդէ հայ գրականութիւն՝ Համագույշինի հայագիտական բարձրագոյն հիմնարկի բոլոր դասարաններուն:

1950-ական թուականներէն սկսեալ աշխատակցած է նաեւ սփիւռքահայ շարք մը թերթերու՝ պատմուածքներով,

տպաւորապաշտ էջերով եւ քննադաստական եւ հրապարական յօդուածներով:

Պողոս Սնամեանի տպագրի առաջին գրութիւնը, չափածոյ կտոր մը՝ «Տաղ տրտմութեան», լոյս կը տեսնէ երուսաղէմի վանքի պաշտօնաթերթ «Սիոն»ի մէջ, իսկ լոյս ընծայած առաջին հատորը, վիպակ մը՝ «Ժամանակ չկայ», 1953ին՝ Պէյրութի: Անկէ ետք լոյս ընծայած է վիպական, քննադաստական ու հրապարակագրական բնոյթի աւելի քան 30 հատոր ու հրատարակելի ունի նոյն սեղի տասէ աւելի գործեր:

Խմբագրած ու հրատարակած է նաեւ տարբեր հեղինակներէ վեցուած 75 հատոր:

2003-ին արժանացած է Հայաստանի Հանրապետութեան Մովսէս Խորենացի շքանշանին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանին, Համագույշինի Կեդրոնական վարչութեան «Համագույշին»ի շքանշանին, իսկ 2010-ին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Հայրապետական օրհնութեան գրին:

2007-էն մինչեւ իր մահը, Պողոս Սնամեան կը խմբագրէր Ազգակ-գրական պարբերաթերթը:

Պողոս Սնամեանի հրատարակած ու հրատարակելի գործերը

Ժամանակ չկայ (1953)

Յեղափոխութեան համար (1956)

Վերջին արարը (1958)

Անդրշիրիմեան ձայներ (1960)

Աւագիւրած նաւը (1963)

Ես այդ շունը եմ (1966)

Կորստական բոյներ (1970)

Աղբատներու աւանդութիւնը, Ա. հատոր (1983)

Ի՞նչպէս հայենեմ (1990)

Միջնարար (1992)

Յայսմաւուրք (1997)

Տարեդարձներ (2001)

Աղբատներու աւանդութիւնը, Բ. հատոր (2002)

Կրկէսին մէջ (Քննադատական յօդուածներ) (2005)

Տպաւորութիւններու հենքով (Քննադատական յօդուածներ)

Վերծանութեան (ուսումնասիրութիւն)

Պատիմեներ (2008)

«Ես իմ անուշ»ի ոդիսականը (ուսումնասիրութիւն)

Զգողական (2010)

Այլ հրատարակութիւններ՝

Միջնարերդ գրական տարեգիրք (1957-1959)

Հանդիպումներ Ուլիլիբմ Սարոյեանի հետ (1978)

Հայաստանի երիտասարդ արձակագիրները (1980)

Արագիլ (1984)

ՊՈՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԸ

ԴՈԿՏ. ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈԽՍԵՔԵԱՆ

Իւրաքանչիւրս մեր երկարատեւ հնչող, բայց իրականում կարճ թուացող կեանքի ընթացքին աշխատում ենք լաւ բարեկամներ ձեռք բերել, պահպանել ու վայել այդ կապը, հնարաւորին չափ իրար օգտակար դառնալ եւ միշտ ներքուստ մեզ հարստացած ենք զգում հաստատուն բարեկամութեամբ շրջապատուած: Իրապէս դժուար է լաւ ու անկեղծ, անշահախնդիր բարեկամ գտնելը, առաւել դժուար՝ այն կորցնելը:

Այսօր ինձ պէս շատերի համար այդ ծանր կորուստի պահն է, քանի որ այսօր կեանքից հեռացաւ մեր հաւատարիմ բարեկամներից Պողոս Մնապեանը:

Այս պահին մտածում եմ ինչպէս ներկայացնել մի անձի, որի հետ երկար տարիների անշահախնդիր բարեկամութիւն եմ հաստատել, որը միաժամանակ միայն բարեկամ չէ, այլ հասարակական դէմք՝ գրող, քննադատ, խմբագիր, ազգային գործիչ, կուսակցական, հրաշալի ամուսին, ջերմեռանդ հայր ու մեծ հայր: Ուրեմն շատերը պիտի գրեն իր մասին եւ բազմազան կողմերով պիտի ներկայանայ Մնապեան անհատը, գրողն ու քննադատը, հայրենասէրն ու քաղաքացին, որով եւ աւելի է շշտուելու իր կորստի խորութիւնը:

Իսկ եթէ այս բոլորին աւելացնենք նաև ծնունդով մուսալեցու եւ այժմեան այնձարցու իր հանգամանքը, կորուստը աւելի պատմական է դառնում, իւրաքանչիւր այսպիսի անձի կորստով նաև պատմութեան մի պատառ ենք կորցնում:

Իր կեցուածքով ու բնաւորութեամբ պարզ ու համեստ, բայց գրչով դիպուկ ու անաչառ, Մնապեան ազգանունը շատ արագ իր տեղն ու դիրքը գտաւ հայ գրական դժուարին աշխարհում: Արգեօք հանճարեղ Օշականին աշակերտէ՞լը իր մէջ արմատացրեց գրական հարցերին շիտակ ու սուր մօտենալու կարողութիւնը, թէ՞ Պիթիասի ծնունդ լինելը:

Ծնուած ու մեծացած լինելով պայյքարի ելած մուսալեցու ընտանիքում, ամենադժուար տարիներին՝ 1927-ին, երբ հերոս մուսալեցիները հայրենի հողի մոլեռանդ կարոտով, մուացած ոչ շատ առաջ կրած մահն ու զրկանքները, ետ վերագրածան իրենց յօշոտուած, դատարկուած հայրենի հողը՝ Մուսա լեռ: Անսելի չքաւորութեան ու գծնդակ պայմաններում հազիւ ոտքի կանգնած, երկրորդ անգամ հայրենի հողից ստիպողաբար հեռացան ու լիբանանեան բարձրաւանդակում: Այնձարում, նորանոր դժվարութիւններով նոր բոյն ու հարազատ երկիր ստեղծելով, շարունակեցին իրենց պապենական՝ մուսալեցու ջիղով ապրել: Այս խմորումներով մեծացած, մանուկ հասակից կեանքի դժուարութեան մէջ թրծուած, բայց իր ծննդավայր Պիթիասի գեղեցկութիւնը, ամրութիւնը իր արեան մէջ ներծծած պատանի Պողոսը, այդ ամենը պիտի փոխադրէր գրականութիւն, պիտի իրեն դարձնէր յամառ ու անընկճելի, օժտէր մեծ աշխատասիրութեամբ ու նոյնքան մեծ բարութեամբ: «Նորէն քիչ մը մեռանք, նորէն ճամբայ ելանք, կայք հաստատեցինք ուրիշ տեղ, ապրեցանք հազար տագնապ, նոր վէրքերով մոռցանք հին վէրքերը...», այսպէս պիտի գրէր նա աւելի ուշ իր պատմուածքներից մէկում:

Կեանքի այդ աննկարագրելի դժվարին պայմաններում պատանի Պողոսը Այնձարի Յառաջ վարժարանը աւար-

տելուց յետոյ զրկուում է երուսաղէմի «Ժառանգաւորաց»ի դասընթացներին, աշակերտելով մեծագոյն զրող եւ ուսուցիչ Յակոբ Օշականին: Այստեղ է, որ նա ընտրում է իր կեանքի ուղին՝ գրականութիւնը, յատկապէս, երբ գժուարահաճ Օշականը գնահատում է իր շարագրելու, վերլուծելու, գրելու կարողութիւնը: Օշականի հետ շփումը դառնում է ճակատագրական եւ միեւնոյն ժամանակ օրհնութիւնը իր անցնելիք յետագայ գրական երկարատեւ ճանապարհին: Նա դառնում է այն երջանիկներից, որոնք գրի էին առնում հիւանդ Օշականի գործերի թելագրութիւնը, ականատեսը լինելով նրա յախուռն ստեղծագործական արարումի պողոթկումին: Պատահական չէ, որ մեծ գրողի մահից յետոյ, նրա ընտանիքը Մնապեանին է իրաւունք տալիս արձանագրելու վանքի սենեակում գտնուող նրա ձեռագրերի ցանկը:

Այդ ձեռագրերի հետ շփո՞ւմն էր արդեօք, թէ՞ Օշականի հօգոր ուժը, որ Մնապեանին դարձրեց Օշականը կենդանացնող ու նոր սերունդին յանձնող, նրա՝ իր գրքերը հրատարակուած տեսնելու իդար իրականացնող անձը, գրագէտը:

Այնուհետեւ 2 տարի մասնակցում է Սորբոնի գրականութեան դասընթացներին:

1950-ին հաստատում է Պէյրութում, մոլեռանդօրէն գրականութեան նուիրուում:

Հարկ կա՞յ յիշեցնելու, թէ ինչ դժուարութիւնից էր անցնելու հայ գրականութեան այս նուիրեալը: Մակայն մուսալեցու յամառութիւնը նրան առաջնորդում է դառնալ մի շարք արմէքաւոր, սփիւռքահայ կեանքը ձեւառած թերթերու պատասխանատու աշխատակցից, գործակից խմբագրից մինչեւ գլխաւոր խմբագրի՝ «Նայիրի»ի, «Ազգակ»ի, Փարիզի Հայաստան շաբաթաթերթի, Բագին գրական բարձրորակ ամսագրի: նա աշխատակցել է նաև «Միոն»ին, «Ակոս»ին, «Ազգարար»ին, «Դրօչակ»ին:

«Գէորգ Մելիտինեցից» գրական հիմնադրամի կողմից, իր խմբագրութեամբ եւ իր առաջաբանով կեանքի են կոչուել Յ. Օշականի բազմաթիւ հատորները, Արամ Հայկապի, Կոստան Զարեանի, Ռուբէն Դարբինեանի, եղ. Պոյածեանի, Ն. Պշշկթաշլեանի, Մ. Մեծարենցի եւ այլոց գործերը: Եւ այս ամենի հետ իր 80-ից աւելի ստեղծագործութիւնները, տասնեակ քննադատական, ակնարկները, հարցագրույցները, վերլուծութիւններն ու յօդուածները:

Անկարելի է այսպէս մէկ հայեացքով ամփոփել մի ստեղծագործողի կեանքը, որը հայ գրով ու գրականութեամբ է միայն շնչել, որը զարձել է սփիւռքահայ ամենատարածուած եւ ազգեցիկ գրական ամսագրի խմբագրերը: մօտ 39 տարի:

Իմ ծանօթութիւնը Մնապեանի հետ սկսուել է գեռ 1964 թուից, երբ կարդացի «Աւագախրած նաւար» քննադատականի իր յօդուածը Կ. Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպի հայաստանեան ձեւափոխուած հրատարակութեան առիթով: Յօդուածի համարձակ, ճշմարտութիւնը որոնող եւ Զարեանի պէս ստեղծագործողին դատապարտող ոճը, անմիջապէս գրաւեց ինձ: Մինչ այդ Հայաստանում չէինք կարդացել վէպի իրական հրատարակութիւնը: Իր այդ յօդուածը թէեւ անխնայ հարուած էր արդէն իր արածի համար:

կան կարգերում կատարուղ ճնշումների համարձակ բացայայտում էր: Այդ յօդուածով Սնապեան անունը դարձաւ փնտոռաւմ՝ ազգային գրականութիւնը պաշտողների համար: Տարիներ անց, Սան Ֆրանցիսկոյում ինձ բախտ վիճակուեց հանդիպել ու ճանաչել իրեն: Առաջին հանդիպումից մենք անմիջապէս կապուեցինք, քանի որ մի ընդհանուր մեծութիւն էր մեզ կապող օղակը, դա թակոր Օչականն էր, որի հանդէպ տածած իմ սէրը եւ իր՝ որպէս նրա աշակերտի, նուիրումը, մեզ գարձեց մտերիմ բարեկամներ: Այնուհետեւ պէյրութեան իմ հիւրախաղերի այցելութիւնների ընթացքում ես աւելի խորքից ճանաչեցի իրեն, իր միջավայրում, «Ազգակի» խմբագրատան, «Բագինի» իր համեստ գրասենեակում: Գրասենեակի, որը ստեղծագործական հաւաքատեղի, աւելի ճիշտ հաստատութիւն էր գարձել աշխարհի տարբեր ծայրերից այցելող մտաւորականութեան համար: Իր գրամեքենայի առջեւ կենտրոնացած նստած, հանդարտ, բայց դէմքի վրա դրոշմուած մտքերի ալեկոծումով, երբեք չյոգնող, երբեք չտրտնջացող գրողը, քննադատն ու խմբագիրը իր ժամանակը անմնացորդ նուիրում էր իր բաց դռնից ներս մտնել ցանկացողներին, իրեն հարցում յղողներին: Իսկ իր հետ անկարելի էր արագ խօսել ու հեռանալ: Իր աշխատասիրութեամբ գարձել էր արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեան հանրագիտարան, իր լայնատարած շրջապատով տեղեակ էր հայրենիքում կատարուող դեռ այդ տարիներին թաքցուղ իրական դէպքերին եւ միաժմանակ գուսապ իր եզրակացութիւններում, ոչ մէկ ցուցադրութիւն կամ ինքնագովութիւն:

Ես բախտը ունեցայ ներկայ լինելու իր վերջին ձեռնարկներից մէկին, Համազգայինի հայագիտական դասընթացին, ուր բացայայտեցի իր մարդկային մէկ այլ յատկութիւնը: Մէրն ու ուշագրութիւնը, գուրգուրանքը անող սերնդի հանդէպ: Զարմանալի հոգատարութիւն ու զգայնութիւն էր ցուցաբերում նրանցից իւրաքանչիւրի հանդէպ, եւ սովորեցի նաև մէկ այլ կարեւոր դաս իրենից:

Ինձ համար կազմակերպել էր հանդիպում Հայագիտականի իր ուսանողների հետ եւ ուսանողները պատրաստել էին շատ հետաքրիւ հարուստ ծրագիր իմ բանաստեղծութիւնների, գրութիւնների ու ներկայացումների հավաքածուներից: Ես սովոր չէի նստել ու լսել իմ մասին, ահաւոր անյարմար էի զգում եւ իր, եւ այդ երիտասարդ գրականութեան նուիրեալների առջեւ, փորձում էի կարճ կապելով վերջացնել հանդիպումը: Բայց մուսալեռոցու յամառութեամբ ինձ ստիպեց նստել ու լսել մինչեւ վերջ: Յետոյ, երբ իրեն բողոքեցի, որ անյարմար վիճակի մատնեց ինձ, իր հանդարտ, կամաց ձայնով խորհուրդ տուեց սովորեմ, որ թէ տալու ժամանակ գոյութիւն ունի եւ թէ վերցնելու: Եւ այդ երկուսի հաւասարակշռութիւնն է, որ ստեղծագործողին ուժ է տալիս, ուրեմն պիտի սովորել նաեւ տուածի վերադարձ ստանալուն: Թէեւ ինքն էլ իր խորհրդին երբեք չհետեւեց, գուցէ պատճառը մեր հայ իրականութեան ետ վերագրածներու առիթի գոյութեան պակասն է, չգիտեմ...

Գնում ենք Այնձար, «Մուսա լերան 40 օրերը» ներկայացնելու, ուր իր պապեանական տունն է, գնում է մեծ խանդապառութեամբ ու անհամերութեամբ եւ ներկայացումից առաջ մօտենում է ու քաշուելով ինձ խորհուրդ տալիս, որ ներկայացումից հանեմ Բագրատեանի եւ ժուլիէթի, իսկուհու տեսարանները: Ես զարմանում եմ իր կող-



Պողոս Սնապեան և Վրէժ-Արմէն Արթինեան «Բագին»ի խմբագրատան մէջ, Պէյրութ, 2004-ին

մից այդ առաջարկին, բայց ինքը չի ուշացնում իր բացատրութիւնը, որ ժողովուրդը այս ներկայացումը ընդունելու է, որպէս անմիջական, բացարձակ իրական իր ապրած պատմութիւնը, ուր այդ յարաբերութիւնները չեն եղել, եւ թող ժողովուրդը ապրի իր իրական պատմութիւնը: Ես անշուշտ նեղուած եւ շուարած եմ, վերջին վայրկեանին այդ հարցի դէմ կանգնելով, քանի որ բեմի վրայ արագ պիտի այդ փոփոխութիւնը անեմ, բայց երբ վարագոյրը բացում եւ տեսնում եմ հանդիսասրահում ներկայ ժողովրդի հաւատով ու նուիրումով ինձ ուղղուած հայեացքները, հասկանում եմ իմ մեծ բարեկամիս իմաստուն խորհուրդը:

Այսպիսին էր Սնապեան մարդը, ոչ միայն իր ժողովրդին, իր շրջապատին ուսումնասիրած, հասկացած, բայց նաեւ նրան պաշտպանող, աւելորդ ցաւ ու ճնշում չպարտադրող, իր իւրաքանչիւր քայլում հաւասարակշռուած ու զգոյշ, միշտ խորհրդատու՝ բայց ոչ ստիպող:

Ընտանեկան դռները միշտ բաց այցելուների համար, քէֆ ու հանդիպումներ սիրող, երեխայի հետ երեխայ, մեծի հետ յարգալից ու զգոյշ: Իր սիրելի տիկնոջ՝ Աղաւնիի հետ ստեղծել էին մի այնպիսի անկիւն, որը ոչ միայն լցցուած էր թուների անկերջանալի խաղերով, երգ ու պարով, այլ անհատում գրերի ու ձեռագրերի աշխարհով:

Պողոս Սնապեանը նաեւ Լիբանանի նուիրեալ քաղա-

1962, Պէյրութ - Զախիեն աջ՝ Հայկ Մարգարեան, Մովսէս Տէր Գալուստեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Կարօ Սասունի, Եղուարդ Պոյամեան և Պօղոս Սնապեան



քաղին էր: Ամեն ինչ իր էութեան մէջ գնահատող մարդը չէր կարող չգնահատել լիբանանեան կառավարութեան եւ ժողովրդի ցուցաբերած վերաբերմունքն ու սրտաբաց հիւրընկալութիւնը կոտորածից փրկուած հայութեան հանդէպ: Եւ այդ նուիրուածութիւնն ու հաւատարմութիւնն էր, որ Պէյրութի երկարատեւ պատերազմն իսկ նրան չկտրեց այդ երկրից, ուր մնաց եւ աշխատեց մինչեւ վերջ: Եւ ոչ միայն մնաց, այլ դարձաւ Պէյրութի մժնոլորտը լեցնող այն անհրաժեշտ օգոնը, որը հարստացնում էր ամենածանր պայմաններում իսկ տոկացող հայ համայնքի իւրայատուկ գոյատեւման թթուածինը: Համայնք, որը մեր ժողովրդի մեծագոյն զաւակների մի բազում փաղանգ աճեցրեց, հիւրընկալեց ու դաստիարակեց եւ դեռ շարունակում է մնալ սփիւրքահայութեան ողնայրը, արեւմտահայ լեզուի ու գրականութեան մատակարարն ու հնոցը, կուսակցութեան դարբնոցը, որի հաւատարիմ ու նուիրեալ անդամներից էր նաեւ հայ պահանջատիրութեան պաշտպան Սնապեան դաշնակցականը:

Վատահաբար Քեսապի այս վերջին դէպքերը վերջնականորէն մաշեցին իր ազգի մտածումներով մաշուած իր սիրտը, քանզի անկարելի է տեսնել իր կեանքի համար փախչող ժողովրդիդ վիճակը եւ այդ տարիքին չվերյիշել քո հարազատների անցած ճանապարհը եւ չտանջուել դրա համար:

Հիմա, երբ գիտեմ, որ այլեւս չեմ տեսնելու իմ անխոնջ բարեկամիս ու խորհրդատուիս, գիտեմ, որ անսամելի դժուար է լինելու այցելել Պէյրութ եւ չտեսնել, չսել իրեն: Հիմա ուզում եմ ոչ թէ իմ հրաժեշտի խօսքը ասել, քանի որ իր պէս բարեկամները երբեք չեն հեռանում մեր էութիւնից, միշտ մնում են մեր էութեան մէջ իրենց յատկացուած անկիւնում, ապրելով մեզ հետ, ուզում եմ պարզապէս իմ սրտի խօսքն ասել, որը թերացել եմ, կամ աւելի ճիշտ յետաձգել եմ անձամբ իրեն ասելու:

Սիրելի բարեկամս, ես միշտ բարեկամութեանը նայել եմ յաւիտենական հայեացքով եւ կարծել եմ միշտ շարունակուելու էր մեր կէս թողած խօսակցութիւնն ու նիւթը: Բայց այսօր դարը իրականութեան առջեւ կեցած ուզում եմ յայտնել, որ ինձ համար միշտ բարձրագոյն հաճոյք են եղել մեր զրոյցները, որքան էլ համաձայնութեամբ կամ անհամաձայնութեամբ են դրանք լեցուած եղել: Միշտ էլ բա-

ժանուել եմ հարստացած ու լիցքաւորուած, որովհետեւ դու դիմացինին գնահատելու կարողութիւն ունէիր:

Բաժմանուել եմ սովորած, որ կարելի է սակաւ վայրկեաններն անգամ տրամադրել ուրախացող թոռներին ու հարազատներին:

Որ կարելի է սիրել մի օտար երկիր, գնահատելով նրա ցուցաբերած հոգատարութիւնը, բայց ամբողջ էութեամբ եւ ջիղերով կապուած մնալ հայրենիքին, ապրել հայրենիքով:

Իմ թանկագին Սնապեան, չնորհակալ եմ, որ մեր հանճարեղ Յ. Օշականին նոր կեանք պարգեւեցիր քո հրատարակութիւնների չնորհիւ: Շնորհիւ այդ հրատարակութիւնների, ես էլ մտայ Յ. Օշականի աշխարհի բարդ յորձանուածին մէջ ու ճգնելով էլ աւելի ճանաչեցի ու կապուեցի իմ ժողովրդի անցեալին, նրա կրած ներքին տառապանքին ու հարստացայ դրանով:

Շնորհակալ եմ, որ քո ղեկավարած «Բագինի» էջերում տեղ տուեցիր արուեստում եւ գրականութեան մէջ նոր ոտք դնող հարիւրաւորներին, տեսար, հասկացար, գնահատեցիր նրանց ընդունակութիւնները ու ճանապարհ բացեցիր նրանց համար:

Շնորհակալ եմ, որ միշտ քաջալերել, ձեռք ես մեկնել մեր շնորհականներին եւ որոնք այսօր ամենուրեք հայ լեզուին, գրականութեան, դպրոցին եւ մամուլին են ծառայում:

Շնորհակալ եմ, որ երբէք չթաքցրիր քո կուսակցական դաւանանքը եւ հաստատեցիր, որ կարելի է կուսակցական լինել եւ լինել խմբագիր ու գրող բոլորի համար եւ հարկ եղած դէպքում յայտարարել՝ «Այո, ես այդ շունն եմ...»:

Շնորհակալ ապաւութիւն քո ստեղծած հիանալի ընտանիքի, քո դաստիարակած զաւակների ու թոռների համար, որոնց հետ պիտի շարունակուի մեր բարեկամութիւնը առանց երբեք քո բացակայութեան:

Քո սիրելի Այնճարի հայի տքնանքով, ծնողներիդ քրտինքով հարստացած հողը, թող հայրենական հոգատարութեամբ պարուրի քո յաւերժական հանգիստը:

Յաւերժ հանգիստ քեզ եւ բազում օրհնութիւն քո թողած անուան, գործին եւ յիշատակին:

Սան Ֆրանսիլո
14 յունի 2014

ՈՐՊԵՍ ՊԱՎԿ ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆԻ ՇԽՐԻՄԻՆ

Պօղոս Սնապեանի սիրտը դադրեցաւ բարախսելէ:

Վերջին տարիներուն անոր յոդ-նատանջ սիրտը յաճախ ահազանդ հնչեցուցած էր:

Սակայն մնացած էր անդրդուելի, պարտուիլ չգիտցող, դիմադրող ... ու այդպէս ալ հեռացաւ:

Քաղաքներ կան, որոնց պարունակը, թաղամասերը, ճանապարհները, սպասումները եւ պողոթկումները ամբողջական կը դառնան իրենց հետ աճած, մեծցած եւ հասած մարդոց կենսագրութեամբ:

Ու կան գրողներ որոնք իրենց կնիքը կը դնեն այդ քաղաքներուն վրայ:

Պէյրութը ամենէն աւելի Պօղոս Սնապեանի խառնուածքին, անոր բռնկումներուն, զպայնութեան, խարագանումներուն մէջէն առագաստ նետող քաղաք եղաւ:

Իրմով մենք ապրեցանք ամբողջ քրական աւանդները, հակատագիրը: Պէյրութը Պօղոս Սնապեանով եւ Պօղոս Սնապեանը Պէյրութով:

Յակոր Օշականէն ստացուած քրական աւանդները, հաւատամքը, խօսքին վեհութիւնը անոր գրչին տակ մնացին առանցքային:

Կրնայիր համաձայն չըլլալ իր հետ բայց պարտագիր պիտի լսէիր անոր խօսքերը:

Այդպէս տարիներու թաւալքին հետ ան դարձաւ Սփիւրքի անունով խօսող, եւ անոր քրական ճակատին հիմնական ձայնը:

Ոչ թէ դարձաւ այլ նուաճեց այդ իրաւունքը:

Նոյնիսկ իր ընդդիմախօսները որոնք ինչ ինչ առիթներով վէճի, հակարծիք ըլլալու կամ դէմ արտայայտուելու առիթներով հանդէս եկան, ուշադիր էին անոր իւրաքանչիւր բառին, շեշտին, իւրաքնաչիւր տողին եւ իւրաքանչիւր նախադասութեան:

Գրականութիւնը իր նուիրական տունը դարձուցած այս խիզախ մարդը նախ եւ առաջ ըսելիք ունէր: Ըսելիքը տեղ հասցնելու խնդիր ունէր:

Սնապեան եղաւ բախտաւոր խմբագիր: Սիրեց իր ըրջապատը եւ ատոր դիմեց քաղեց անմնացորդ սէր եւ ջերմութիւն:

Իր խօսքին, իր ըսելիքին հանդէպ անվերապահ ուշադրութիւն գոյացուց: Այնքան մը, որ վերջին տարի-

ներու իր խմբագրած «Ազգակ գրական»ի խիզախ «Խմբագրի խօսք»ին դիմաց «ուղղափառ» մնացած Պէյրութը ժխտական ոչինչ տեսաւ եւ ընդհակառակը անոր խօսքերը ընդունուեցան որպէս տարիներու փորձ ունեցող մտաւորական աւագի մը խօսքերը:

Սիրեց ու հոգատար ներկայութիւն եղաւ բոլոր անոնց, որոնք իր բառին, իր ըսելիքին, իր խնամատար վերաբերմունքին դիմաց ականջ տուին, ուշադրութիւն ընծայեցին եւ մանաւանդ սորվիլ ուղեցին :

Կեանքի պատերազմն երուն մասնակցած, գրականութեան մեծ ու փոքր պայքարն երուն մասնակից եղած Պէյրութի ազգու գրողին էութիւնը յոգնութիւն ու դադար չունեցաւ: Ասոր վկայութիւնը իր բեղուն կենսագրութեան բոլոր տարեթիւերն են ու հիմնական ապացոյցը այս խօսքին՝ անոր հետ հանդիպման իւրաքանչիւր առիթի նոր գիրքի մը ընծայագրութեամբ մակագրելով ու ըսելով. «Հրամմէ», ահա նոր մը»:

Սնապեան առանձինն կատարեց հրատարակաչական մարմիններուն գործը: Տպեց, խմբագրեց, ներկայացուց, վերատպեց, հանրութեան մատելի գարձուց:

Յակոր Օշականը այցի բերաւ մեր տուները եւ այդ սրբազն անունը ցանեց մեր յիշողութեան եւ խլճին մէջ:

Զարմանալիօրէն, երբ կը քալէր Պուրճ Համուտի իր այնքան փայփայածի փողոցներուն մէջ, կարծէք թակոր Օշականն էր որ կը քալէր իր կողքին: Այդպէս էր կարծէք ու մինչեւ իր կեանքի վերջին բողէն, վստահ եմ, չնչեց ապրեցաւ, զգաց, սիրեց, «կոռուցաւ», խօսեցաւ, ըսաւ ու եղաւ Յակոր Օշականով:

Բայց չմնաց անոր շուքին տակ:

Պօղոս Սնապեանի յատկապէս գրադատական չէնքը, տպաւորապաշտ գրութիւնները, գրողներու մասին եղած վերլուծական տողերը բնորոշեցին իր էութիւնը:

Որովհետեւ ան գրականութեան տաճար մտած էր իր ուրոյն հետքը թողնելու:

Պօղոս Սնապեանի թողած բացը անկարելի պիտի ըլլայ լրացնել յատկապէս երբ ի մտի ունենանք ամեն օր մտաւորական արժէքներէ պարպուող սիրեւքը:

Սնապեան, որ նորերուն հանդէպ եղաւ պահանջկոտ եւ հիներուն հանդէպ նախանձախնդիր, երկար տարիներու մաքառեցաւ Վազգէն Շուշանեանի, Յակոր Օշականի եւ այլոց ձեռագիրներուն հրապարակումը գարձնելով առաքելութիւն: Ու գաղտնիք չէ, որ յատկապէս այս երկու անուններուն ի Հայաստան աշխարհ գարձը կը պարտինք իր քրտնաշան եւ յամառ ճիգերուն: Սիրցուց Շուշանեանը ու նաեւ ճանչցուց մեծն Յակոր Օշականը:

Կարեւոր հանգրոււան մըն են Սնապեանի Խորհրդային Հայաստանի տարիներուն գրած ու խմբագրած գործերը, երբ ան Սփիւռքի մէկ կարեւոր հատուածին անունով ստանձնեց «Երկաթեայ վարագոյր»ի ետին եղող Հայաստանի մտաւորական կեանքին մէջ երեւելի գարձած շատ մը տհաճ բարեկերը խարազանողի գերը:

Սնապեան նաեւ քննադատեց 1937-ի գէպքերը եւ այդ տարիներու բռնագատումներուն զոհ գացած գէպքերուն մասին յատուկ աշխատասիրութիւններ հրապարակեց:

Իր գրական այս «Ընթացքը» պատճառ զարձաւ որ ան Հայաստանի մէջ գառնայ անբաղձալի տարր եւ անոր մուտքը երկիր արգիլուի: Այդ արգելքը տեւեց մինչեւ 1991 թուական ու անկէ ետք Սնապեան գրեթէ ամեն ամառ գտնուեցաւ երեւանի մէջ: Անոր համար Հայաստան գալը տեսակ մը տօնախմբութիւն էր:

Տարի մը առաջ, երբ իր մահկանացուն կնքեց բանաստեղծ Աբրահամ Ալիքեանը, Սնապեան անոր թաղման յաջորդող օրերուն խոր զարմանքով եւ ընդգումով լեցուն յօդուած մը ստորագրեց, բողոքելով թէ զաղութիղեավարութիւնը ինչու այդքան կ'աճապարէր անոր թաղումը ի կատար ածել առանց բանաստեղծին արժանի յարգանքը ընծայելու, գինք հապճեան հողին յանձնելով:

Սնապեանի մասին այս տողերը որպէս պսակ թող ընդունուին բոլոր անոնց կողմէ, որոնք տարբեր պատճառներով ներկայ չեղան վերջին հարաժարական հարաժար անոր թաղումը ի կատար ածել առանց բանաստեղծին գոյացաւ այս պատճեան եւ արագանքը ընծայելու, գինք հապճեան հողին յանձնելով:

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ Երեւան

«ՆԱԽ ՄԱՅՐԵՆԻՆ»
(Նախաձեռնութիւն Կեդրոնական վարժարանի, Կ. Պոլիս, 2013)
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵՎՆ

Գրասեղանիս վրայ, թերթերու եւ հրատարակութիւններու «ընթացիկ» գէզիս մէջ, միաժամանակ, քով քովի կը գտնեմ հայերէն հրատարակութիւն մը՝ Պոլիսէն, ապա՝ «Աղդակ»էն բանի մը կտրօններ — բոլորն ալ՝ Սփիւրքի տարածքին մայրենի լեզուի գործածման եւ յաւերժացման հիմնախնդիրին նուիրուած:

«Ազգակ»ի կտրօններու թղթածրաբիս մասին՝ նեմարանական հին ընկեր-ընկերուին նամակներէն կազմուած՝ աւելի ետք: Իսկ առաջինը՝ «պոլսեցին», գործնականորէն համեստ, մեծաչափ, ոչ ստուար տեսրակի մը արտաքին տեսքով, ունի սակայն կտրուկ եւ կուռ «Նախ՝ Մայրենին» խորագիրը, որ յայտարարագիր-մանիֆեստի մը պէս կը ծածանի տիտղոսաթերթին՝ կողքին վրայ:

Երեւութական այս երկուութեան ստեղծած հարցականը կը վերածուի անվերապահ հետաքրքրութեան մը, երբ կ'անդրադառնանք, որ հրատարակութիւնը մեր գրասեղաններուն կը համնի իր 130-ամեակի սեմին գտնուող հաստատութենէ մը՝ Կ. Պոլսոյ Կեդրոնական վարժարանէն:

«ՆԱԽ ՄԱՅՐԵՆԻՆ» – ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Առաջին զարմանքը, որ կրնայ՝ ո՛չ անտեղիօրէն՝ պատել սփիւրքահայ ընթերցողը, պիտի բխի այս խորագիր ենթադրած մշակութային պահանջատիրական կեցուածին — մանաւանդ եթէ՝ նախորդ երեք-քառորդ դարու «հանրապետական» յորջորջուած թուրքիոյ պայմաններուն վերիվարոյ ծանօթ՝ չէ հետեւած վերջին տարիներուն նորագոյն հոլովոյթին: Հոլովոյթ՝ որմէ, ճիշդ է, իր կարգին կարծես քիչ տեղեակ կը թուի կամ կը ձեւանայ ըլլալ թուրքիոյ մեր աւանդական համայնքը՝ իր մեծամասնութեան մէջ:

Ընթերցողին զարմանքը պիտի չնուազի տեսրակի թերթատումով: Առաջին կէսով՝ հայերէն, միշտ՝ համեստ, հաստատութեան մը «ներքին գործածութեան» յատուկ մեքենագրեալ աշխատանքային փաստաթուղթի երեւոյթով, դպրոցական կեանքէ քանի մը նկարներով լրացուած, — անիկա յայտնօրէն մայրենի լեզուի ուսուցման առնչուած լուրջ, լրջագոյն հարցեր կը շօշափէ՝ դատելով արդէն բաժինները իրարմէ անջատող ենթախորագրերէն: Տակաւին. երկրորդ կէսը՝ թրքերէն՝ գրեթէ բառացի կը կրնէ հայերէն բաժինը: Առանց մոռնալու տեսրակը բացոյ ներքին տիտղոսաթերթի ետին (էջ 2), տեսրակի բովանդակութեան ցանկի եւ խմբագրական «Աշխատանքային խումբի» ուսուցիչներու անուններուն առընթեր, հայթայթուած տեղեկութիւնները՝ աղբերւուներու մասին. «Գրքոյկին պատրաստութեան իմբնական աղբիւրը եղած է Տիգրանակերտի Քաղաքական եւ ընկերային պրատումներու ինստիտուտի (DISA) հրատարակած «Նախ Մայրենին» գրքոյկներու շարթը»:

Ընթերցողը «երկրորդ մտածումով» մը պիտի հաստատէ եւ ընդունի, որ Պոլսոյ մէջ հայերէնի՝ իր մայրենի լեզու պահպանման (եթէ ոչ արդէն՝ վերականգնումի) այս ճիգը բնականօրէն պիտի համընկնէր երկրի գլխաւոր «փորամասնութեան» լեզուի՝ բրտերէնի պահպանման ճիգերուն

Հետ: Զդադրելով զարմանալէ՝ որ Տիգրանակերտի (Տիգրայէքիր) հետազոտական որոնումներու հիմնարկը վերահասու եւ հաղորդ գարձած ըլլայ արեւմտեան մշակոյթներու եւ մարդկային գիտութիւններու նորագոյն նուագումներու, ինչպիսին են երկեղու կրթութեան եւ երկմշակութայնութեան բարիքներու...:

ԵՐԿԵԶԻՌԻԹԻՒԽՆԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ - ԵՒ ԻՐ ՀՈԳԵՄՏԱԽԻՐ ԲԱՐԻՔԵՆԵՐԸ

Անպայման նշելի՝ նաեւ հրատարակիչներուն կողմէ վկայաբերուած եւ իբր գրքոյկին առաջնորդող բնաբան սկիզբ տեղադրուած մակագրութիւն-հատուածը՝ Փրանսահայ լեզուաբան եւ երկեղութեան անուանի մասնագէտ ժիլպէն (Ժակոբ) Տալկալեանէ, անոր «Բազմալեզու մանկութիւն» ուսումնասիրական հատորէն⁽¹⁾: Հատուած՝ որմէ բնորոշ մասեր թարգմանովի կը կցեմ հոս՝ քովը:

Վերջապէս, Կեդրոնական վարժարանի տնօրէնութենէն ստորագրուած ներածական խօսք մը՝ համառօտակի՝ կը դնէ մեկնակէտ-հիմնահարցը, այսինքն փաստը մեր օրերուն մայրենի լեզուն «քնական միջավայրի մէջ» (ընտանիքի, անմիջական շրջապատի) սորվելու գրեթէ անկարեկիութեան. ապա նաեւ տիրող անգիտակցութիւնը մայրենիի կարեւորութեան՝ երեխայի ու ապագայ չափահասի կազմաւորման համար:

Կարեւոր ընդգծում. — Գրքոյկը, բնականօրէն դատապարտելով բութ եւ կարծատես «ինչչո՞ պիտի ծառայէ հայերէնը» հարցագրումը, միւս կողմէ կը մնայ վերապահ նաեւ հանդէպ «լեզուին տիրապետող ոմանց... [զայն սրբացնելու] դիրքին», այսինքն զայն պահպանելու, կեանքէն կտրելու եւ հիւծումով սպանելու այս երկրորդ ձևին: Կրնակ մերժում, հիմնուած՝ «մայրենի լեզուի, երկեղութեան եւ բազմալեզութեան մասնագէտներու աշխատութիւններու վրայ»:

Ներածական խօսքը կը փակուի՝ նոյնքան պահանջամիջական շեշտ կրող մաղթանք-յոյսով մը, թէ՝ «այեւս աշխարհի վրայ ո՛չ մէկ լեզու, ո՛չ մէկ մշակոյթ [անհետանայ], եւ այս ուղղութեամբ իշխանութիւններ եւս [ցուցաբերեն] պէտք եղած զգուցութիւնը»:

Տեսակէտը, թէ՝ տիրող լեզուով դաստիարակութեան պէտք է տրամադրել առաւելագոյն ժամանակը, եւ որ «փոքրամասնական» լեզուի մը տրամադրուած ժամանակը «կորսուած ժամանակ» է ի վնաս առաջնին, ինչպէս երկար ատեն պնդեր են կրթական բազմաթիւ «աւանդական» տեսութիւններ եւ դեռ կը պնդէ տիրական տգիտ մտայնութիւնը, — սխալ է իմբնովին: Ընդհակառակ՝ «երեխային երկու լեզուով դաստիարակութիւլ պատճառ կը դառնայ, որ մեծամասնութեան լեզուն եւ օտար լեզուները աւելի լաւ սորվի»: Ուրեմն անոր ճիգ տրամադրելը ժամանակի կորուստ չէ — առնուազն...:

Գրքոյկի աշխատասիրողները, կէտ առ կէտ սքեմայական, բայց խօսուն թուումով մը, կը մանրամասնեն երկեղութեան եւ երկեղու կրթութեան առաւելութիւնները, հիմ-

ԻՐ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ՝ ԺԻԼՊԵՐ ՏԱԼԿԱԼԵԱՆԻ ՄԷԿ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«Ահա Ժիմիի լեզուական կենսագրութեան ամենադժբախտ մէկ դրուագը.՝

«Ժիմիի ծննդյան կատարելապէս եռավեցու ևն՝ հայերէն, թրմերէն եւ ֆրանսերէն։ Այս լեզուները սորված են ատենին, ֆրանսացի կրօնաւորներու դպրոցը, Թուրքիոյ դէպի դուրս բացուած առանձնաշնորհեալ ցուցափեղկ Պոլսոյ մէջ, դարասկիզբին, Ցեղասպանութենէն առաջ։ Առաւել՝ իր մայրը նաեւ յունարէն կը խօսի, «Քաղի յոյն ընկերուի կիներէս սորված», կ'ըսէ։

«Այս իրադրութեան մէջ, բնական պիտի ըլլար, որ Ժիմին, այն ատեն 9-10 տարեկան, նաեւ հայերէն սորվէր. մանաւանի որ՝ այդ տարիներուն՝ արդէն տուն փոխած են եւ թրմախոս մեծ հօր ու մեծ մօր հանդէպ իբր յարգանի թրմախոսութեան պարտադրանել՝ չի դրուիր ալ։ Ուրեմն որոշուած է. եւ որովհետեւ հայերէն քանի մը տասնեակ բառ ու արտայայտութիւն միայն գիտէ եւ խօսիք վարժութիւնն ալ չունի (հայախոս բարեկամ ու այցելու շատ ժիշ են), ան հայերէն պիտի սորվի առանց դպրոցի։

«Եւ ահա մեծ սխալը, անդարմանելի խառնաշփորք, միակ քայլը՝ որ կրնայ երեխայի մը ի սկզբանէ տաղտուկ ու մերժում ներշնչել. — Մայրը, մոոցած՝ քէ Պոլսոյ փողոցներուն մէջ յունարէնը ինք ինչպէ՞ս սորված էր, տղուն կը պարտադրէ հայերէն նախնական այրեննարան մը, ուր տառերը կ'աւանդուին բառերէն առաջ, եւ բառերը՝ նախադասութիւնները՝ լիր դուրս եւ օտար՝ շրջագրութենէն ու կացութիւններէ։

«Եւ դեռ՝ գերագոյն անհերերութիւն՝ այս մերուար կը փորձէ գրաւոր լեզու աւանդել առանց բերանացիի, առանց ընկերային փոխգործումներու եւ լեզուի հոգե-շարժումային իմանուններու նկատառման։ Զեւ, որ լրիւ խցանող է՝ նոյնիսկ ծանօթ այրութենով լեզուի պարագային. իսկ տարբեր այրութենով լեզուի մը համար՝ ուղղակի կը տանի խցանումի եւ մերժումի։

«Այս աղէտը յանգեցաւ վերջնական յուսալքումի մը. Աւելի փոքր՝ հարկաւոր տարիքին՝ լեզուն բերանացի չէ սորված. առանց ատոր, եւ առանց դպրոցի՝ սորվիլ հիմա շա՞տ նիգ կը պահանջէր. շա՞տ ուշ էր։

«Արդեօֆ նաեւ ծո՞յլ էի. Բայց մեծերուն դերը չէ՝ նիշ՝ լեզուի ուսուցման նաշակը տուող պայմաններ եւ կառոյցներ ստեղծելը. եւ նաշակ ու նաշակելիք արդէն չե՞ն սկսիր... բերնէն։»

նականին մէջ՝ ուսումնական հեղասահ ընթացք եւ հոգեմտառութեան ի նպաստ առաջարկութեան հոգեմտառութեան հոգեմտառութեան հոգեմտառութեան մը:

**ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԷԱԿԱՍԻ ԲԱԺԻՆԸ
ԿՐԹԱԿԱՆ ԵՐԿԼԵԶՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒ ՄԷՋ**

Երկեղութեան եւ երկմշակութայնութեան ի նպաստ հաստատուած դրոյթները, որոնք կը բանաձեւուին այսպէս, կը ստանան յատուկ կարեւորութիւն, երբ՝ մտածումի երկրորդ փուլի մը մէջ՝ կը շեշտուի հոն, որ հարցը կը վերաբերի՝ յատուկ՝ մեզ մեծապէս շահագրգոռ լեզուական «զոյգ»ի մը — տիրող/տեղական լեզուի ու մայրենի՝ լեզուին։ Եւ որ՝ գիտական նորագոյն այս դրոյթները փաստորէն կը վերաբերին փոքրամասնութիւններու մայրենի՝ լեզուներուն, յատկապէս՝ «վտանգուած»ներու, յօգուտ որոնց դրսոյկին ներածական խօսքը կը յայտնէր յաւերժացման իր յոյսն ու մաղթանքը, արդէն սկիզբը նշուած։

Եւ հոս է, որ տղիտօրէն «Թերարմէք» նկատուած փոքրամասնական/մայրենի լեզուի կարեւորութիւնը կ'ընդգծուի երկրորդ կարմիր գիծով մը. — Անոր՝ տիրող լեզուին հետ համընթաց պահպանումը, բացի «վնասակար չըլլայու» խոնարհ յատկութենէն, երկլեզու կրթական համակարգին մէջ, հոգեմտառու հորիզոն բացող գործոն մըն է, հմանական օժանդակն է՝ այլ լեզուներու եւ կրթական նիւթերու առաւել գիւրին ընկալման։ Ու մանաւանդ՝ իր բացակայութիւնը, պակասը՝ վնասաբեր է. քանի «կրնայ պատճող դառնալ, որ աշակերտներ իրենց ինքնութենէն հեռանան եւ ունենան բազմաթիւ ընկերային եւ հոգեկան հարցեր»։

Ուրեմն, անհրաժեշտ է մայրենին ուսուցանել այնպէս՝ ինչպէս տիրող/տեղական լեզուն(երը), այսինքն նոյն լրջու-

թեամբ ու որակով, եւ իբր արդիւնք՝ անոր/անոնց հետ հաւասար մակարդակով — լեզուական նրբութիւններ, գիտական եղարաբանութիւն եւ կիրարկումներ։ Այսինքն, նաեւ, իբր կենդանին՝ լեզու, համապատասխան զայն գործածողի կեանքի բոլոր կիրարկումներուն, եւ ոչ իբր չոր գիտելիք, ոչ իբր բրածոյ նիւր՝ յարուցանելով «պարտը» մը վնարելու անխուսափելի տաղտուկը...։ Այլապէս, վկայակրնչուած ուրիշ լեզուաբան-հոգեբանի մը՝ ձիմ Քամինզի⁽²⁾ բնորոշումով, ենթական պիտի ըլլայ «կիսա-երկլեզու», այսինքն ոչ-նպաստաւորեալ լեզուի պարագային՝ պիտի մնայ լեզուական երկու «սեմ»երէն «ստորին սեմ»ին վրայ, եւ կազմաւորուող հոգե-մտաւոր անհաստականութիւնը պիտի կը այդ աններգաշնակութեան հետեւանքները։

**ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՒ ՀԱՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍՓԻՇԻՌԻ ՄԷՋ**

Հայերէնի ուսուցման գիմագրաւած գժուարութիւններն ու յաճախակի ձախողանքը, քիչ հայախօս եւ ոչ-հայախօս շրջաններու մէջ (քանի խօսքս այդ շրջաններու մասին է... առայժմ), առաւել եւս ցայտուն ձեւով կը կապուի այդ ուսուցման ժամանակալիք, կեանիք կտրուած «մեթոս»ներուն։ Պարագայ, որ հայալի ցուցահանուած է Ժ. Տալկալեանէն մէջբերուած օրինակ-հատուածին մէջ։

Սփիւռքի արեւմտեան շրջաններուն գիմագրաւած այս գժուարութիւնները, գիտուին անոնք ամբողջօրեայ հայկական հաստատութիւններու թէ աւելի մասնաւոր շրջանակի մէջ (ընտանեկան հայակրթութիւն, մասնաւոր դասեր, միօրեայ գասընթացքներ), իրենց հանդոյցը, ուրեմն եւ հանգուցալուծումը, ունին այս բանալի սկզբունքին մէջ. — Հայերէնը, բանի չունի իւրացման իր բնական հայախօսական միջա-

վայրը, պիտի դասաւանդուի «բնականանման» մեթուներով, այսինքն երեխան/պատանին պիտի սորվի հայերէնը՝ զայն ապրելով՝ որոշ ժամերու վրայ՝ խաղով, կենդանի զրոյցով, մարմնի եւ մտի գործօնութեան առնչուած վարժութիւններով, զգացական մասնակցութեամբ, յատուկ սերտուած մեթուներով՝ որոնցմով ողողուած է լեզուներու ուսուցման համաշխարհային միջավայրը այսօր, ուղղակի մեր քթին տակ:

Սակայն պէտք չէ անտեսել հակադիր-լրացուցիչ միւս սկզբունքը: Եթէ անհրաժեշտ է մայրենի լեզուն դարձնել մեթութիւն եւ կենդանի ուսուցումի մը առարկան, ուրիշ սխալ մը կ'ըլլայ մայրենին դարձնել լեզուական ՄԻԱԿ յենակէտ (Հոս մանաւանդ՝ շատ փոքր երեխաներու պարագային): Պէտք է զգուշանալ «գուտու» հայախօսութեան մը կիրարկումով ձախողեցնելչ անոնց մուտքը աշխարհ, այժմքն մանկապարտէդ, ու կրելէ՛ հետեւող հակազդեցիկ խզումներու աղէտը: Ճիշդի՝ երեխաները երկլեզու դարձնել է՝ լեզու ելլելու իսկ փուլեն. այսինքն գուրգուրալով պահպանել ապագայ չափահասին մօտ հայերէնին հաղորդ մնալու գլխաւոր միջոցն ու երաշխիք՝ երկլեզութեան «ատակութեան» սարքը, որ կը նուաճուի շատ քարմ տարիին միայն: Այս հիմնաւորումով է որ երկլեզութեան նուաճում-գործարկումին վրայ աւելցուած է «կանուխ» կամ «կանխարէպ» (précoce) ճշգրտիչ եզրոյթը:

* * *

Հիմա կու գամ «Ազգակ»ի «Նամականի»ին մէջ լոյս տեսած լուսանձելըսեան կլոր-սեղանի մը չուրջ թղթակցութեան, անկէ ծնած զոյդ յօդուած-նամակներու եւ տրուած վերլուծական պատասխան-նամակին⁽³⁾: Առաջիններուն մէջ, ստորագրուները՝ ներկայիս Արեւուտաք ասլող նախորդ սերունդի ճեմարանական ընկերուհիներ, հաստատումը կ'ընեն դժուարութիւններու եւ որոշ անյաջողութեան, նաեւ մտահոգութիւններու, — բայց փաստորէն արդէն՝ իրենց իրենց յանցքեր են նիշ՝ վերը նշուած այս եզրակացութիւններուն: Անոնց փորձը բաւարար փաստ է, իր կարգին, որ պիտ չկայ վախնալու երեխաներու մտին ու լեզուին մէջ առաջանալիք որեւէ «խանոնուրդ»:⁴ Նոր խօսիլ սկսող երեխան հիանալի կրնայ իւրացնել՝ զուգահեռաբար՝ իրարմէ անջատ մէկ-էկ աւելի լեզուներ, զանազաներով զանոնք իրարմէ, անհիմն դարձնելով մտավախութիւնը այդպիսի «հայերէնանպլերէն կամ հայերէնաֆրանսերէն խառնուրդներու»:

Կը բաւէ, որ մեծերս մէնք յարգենք անջատումի այդ սկզբունքը, մէնք պահպաննենք լեզուներու անջատ-անջատ գործածման կանոն մը, երեխային շուրջ, անուղղակի համարանի ու յարգանք թելադրելով իրեն՝ մայրենի հանդէպ ե՞ւ «լեզու-երեւոյրին» հանդէպ առհասարակ: Միանգամայն իրեն ցոյց տալով մեր (իր շուրջի չափահասներու) աստակութիւնը լեզուա-մշակութային երկրու ոլորտներուն ալ հանդէպ: Այսպէս է միայն, որ երեխան, աւելի ուշ՝ երեք-չորս տարեկան, դէպի արտաշխարհ իր բացուածքը պիտի իրականացնէ բնական ու հեղասահ ընթացքով, խնայելով իր ծնողներուն եւ ընտանեկան շրջապատին յետագայ տամանքներ, երբեմն անելաննելի ու անդարձմաննելի կացութիւններ: Արեւմուտի մէջ, մեր շուրջ, թէեւ սակաւարիչ՝ չեն պակիր այսպիսի կատարեալ-երկլեզու լետանեկան միջավայրեր: Պարագաներու սակաւաթիւ, կամ նոյնիսկ հազուագիւտ ըլլալով՝ կարելիութեան փաստը չի դադրիր փաստ ըլլալէ...:

Պիտի ըստի՞՝, թէ այսպէս շատ բան ակնկալած ու պա-

հանջած կ'ըլլանք կեանք մտնող մանուկի մը ընտանեկան շրջանակէն, եւ որ իրատես չէ ատիկա: Դիտողութիւնը տեղին կ'ըլլար, եթէ շատ բան պահանջել է... «բնականութիւն՝ պինուած տարրական արթնութեամբ մը միայն...: Կամ պիտի պնդուի՞, տակաւին, որ այսպիսի անկնկալութիւն «անգործնական» է կեանքի ներկայ պայմաններուն մէջ, մանաւանդ արեւմտեան Սփիւռքի պայմաններուն՝ ուր տնտեսական կարիքը յաճախ գործի ասպարէզ կը նետէ ծնողները՝ հայր եւ մայր...»

«ՀԱՅԵՐԷՆ ՍՈՐՎԻԼ» ՏԱԺԱՆԵԼԻ ՈՒ ՏԽՈՒՐ ՊԱՐՏՔ, ԱՆՏԵՍԻԼՔ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ...

Պատասխանս, ու նախ՝ հիմնականը. — Զեմ մոռնար, որ այդպիսի բնականութենէ այնքա՞ն հեռու ենք ու հեռու կը մնանք... միայն ու միայն՝ երբ հարցը կը վերաբերի հայկական արժէքներու և լեզուի եւ մշակոյթի: Այնա՞ն մոոցած ենք հայերէնին՝ «բնականուն լեզուի», առօրեայի, ուրախութեան, կայտառ մտա-մարմնախաղիերու, ամբողչական հաղորդակցութեան գործիքի հանգամանքը, որ հայախօսութեան ճիզն ու պայքարը ի վերջոյ «կը յաջողինք» հակադրել երեխաններուն հետ հածելի առօրեայ մը բաժնելու արարքին, զիրենք «վայելելու» բնական կարիքին ու իրաւունքին...: Այնքա՞ն «բնական» է եղած մեղի համար՝ այս արժէքները՝ հայերէն սորվիլը, հայերէն խօսիլը, տեղադրել ազգային-բարոյական պարտաւորութեան նշանին տակ, առնեն՝ տաժանելի եւ տիտուր պարտի մը պէս, — որ ոչ իսկ կ'անդրադառնանք այլեւմ՝ բո՛ւն բնականութեան ճաշակի այս կորուստին...:

Ապա՝ ասոր ուղղակի առնչուող՝ կազմակերպական տեսիլիքի չգոյութեան փաստը: Սփիւռքի համայնքներու կազմակերպումը, շուարուն, օրը օրին կարկտան միջոցառումներով ընթացող, այսպէս՝ կրնար ծնիլ միայն իրեն նման անտեսիլի «մանկավարժութիւն» մը:

Արեւմտեան Սփիւռքի մէջ գալրոցական ցանցի աղքատութիւնը եւ աշարկու յապաղումը ընդգծուեր է յաճախ, եթէ չէ մտածուած իսկ ըստ խորքի: Բայց հոս ես շատ աւելի համեստ օրինակ մը կ'ուզեմ տալ, թելադրուած նախադպրոցական տարիքի երեխանները լեզուա-մշակութային պատշաճ պայմաններու մէջ անցնելու մասին վերը ըսուածներէն. Այդ ինչպէս՝ կ'ըլլայ, որ երեւելիք չենք մտածած, ա'լ աշխատող մայրերու լեզուներ հաշուող մեր համայնքներուն մէջ (նախ՝ արեւմտեաններուն, բայց այսօր՝ նաեւ արեւելեաններուն...) տեղադրել մանկամտիւնիրու խիտ ցանցիր...: Որոնք, շատ աւելի դիւրին ստեղծելի եւ կազմակերպելիք քան բուն վարժարանները, եւ աւելի դիւրին - բայց ոչ պատահականորէն - կազմաւորելի անձնակազմերով, առաջնորդէին մեր մանուկներուն կենսամուտքի ամենէն ընկալուչ 3-4 տարիները լեզուա-հոգեբանական եւ մանկավարժական ուղղի ճամբաններէ⁽⁴⁾: Բայց նման կառոյցի մը իրագործման համար, ինչպէս անոնց հետեւող վարժարաններու պարագային, պիտ էր տեսիլ ունենալ, հոգե-մանկավարժական տեսարթիւն եւ գիտականորէն իմբնաւոր իեռանկարներ ունենալ — բան մը՝ որ... ունեցե՞ր ենք երեւելիք...:

ԻՍԿ ՄԵՐ «ՀԱՅԱԽՈՒՐ» ՀԱՄԱՅՆՈՒՐԸ...

«Ոչ-հայախօսական» պայմաններ դիմագրաւող արեւմտեան Սփիւռքին (ու անոր կցելի՝ հարաւ-արեւելեան եւրոպային ու - տեսանք - հայկական Պոլիսին) վերաբերող՝ Կեղրոնականի գրքոյէին բիսած այս խորհրդածութիւնը

Հոս կրնայ փակուիլ...: Բացի եթէ՝ յանկարծակի անդրադարձով մը՝ հարց տանք. — «Հապա մե՞նիք... Հապա մեր արեւելիան հայախօս» Սփիլուքը...»: Ո՞ւր է մե՞ր հայախօսութիւնը, ո՞ւր է մե՞ր իրագործած հայ մշակոյթի յաւերժացման գործը, ի՞նչ կարելի է ըսել անոնց մասին՝ հոգե-մանկավարժական գիտութիւններուն ներկայ արժեշափերով. ի՞նչ ենթադրութիւն կրնանք ընել անոր յառաջիկայ հարիւրամեակի հաւանական հեռանկարներուն առջեւ:

Ճեմարանականներուն նամակներուն մէջ ոգեկոչուած միջին-արեւելեան միջավայրը (Ճեմարան, թէ՛ ուրիշ հայաշունչ, աւանդական հաստատութիւններ), ուղենք կամ ոչ, չէ՛ր Սփիլուք, այլ չերմանոցային պապիւայ զանգ, արուեստական հայրենիի մը, ինչպէս էին որոշ չափով այդ համայնքները իրենք, ասկէ յիսնամեակ մը առաջ (նամակագիրները արդէն լաւ գիտեն, որ այդ համայնքներն իսկ այսօր մեծ մասամբ դադրած են այդպիսին ըլլալէ...): Յամենայն դէպս, Հայերէնի կարգավիճակը, երէ՛կ ալ՝ ինչպէս այսօր, միշտ տեղի տուած է հարցականներուն...: Դպրոցը կը սորվէին հայերէն՝ բայց անիկա ինչի՞ կը ծառայէր դպրոցէն որուս(5): Առօրեայ մը տնտեսելու, տարրական հաղորդակցութիւններուն մը վարելու համայնքի անդամներուն հետ: Ուրիշ...: Անոր գերը շուտով կը նուազէր, կը տժգունէր՝ մեր ընթերցումներուն, մտաւոր մակարդակի հաղորդակցութիւններուն մէջ, ուր՝ լաւագոյն պարագային՝ սանկ-նանկ իրը ըրջանակ կ'ընկերանար օտար եղբարառերով զարդարուած մեր խօսակցութիւններուն: Անցեալը գեղեցկացնելը յայտնի փորձութիւն է, բայց լաւ է զգաստ ըլլալ...:

Այսօր նոյն համայնքներուն մէջ դիտուածը՝ ասոր քիչ մը շեշտուած պատկերը չէ՝ միայն — հայերէնը՝ ընդհանուր մտայնութենէն դպրոցին ալ պարտադրուող՝ «աղքատ ազգականի» դերին մէջ դպրոցէն դուրս՝ գրեք ոչ մէկ շահագրութիւն հայերէն լերեցումներու եւ հայ գրականութեան (յայտնօրէն, լուր չունինք, որ աշխարհը կը շարունակէ առատօրէն գիր-գրականութիւն արտադրել, հրատարակել ու կարգալ...): Ու պարզ է, որ մայրէնի լեզուն, երբ իրեն չենք չնորհէր ամբողջական, բազմախաւ կիրարկում (ներառեալ ակադեմական արտայայտութեան մակարդակը), երբ նոր սերունդը դպրոցէն ու դասագիրքն դուրս չի՛ կարդար, — այդ լեզուն դատապարտուած է իրեւումի, նոյնիսկ երեւուրական հայախօսութեան մը միշավայրին մէջ:

Լիբանահայ հայակրթական համակարգի թերիները, անոնց շուրջ առգոյ մտահոգութիւնները, փոխնիփոխ խոստովանուած կամ ծածկուած-անդիտացուած, ուսուցման միջոցներու այս նոյն անբաւարարութենին, ոչ-պատշաճներումէն կը բիխմ՝ ինչ որ Արեւմուտի մէջ: Զակառակ երեւութական տարբերութիւններու: Միջին Արեւելքն ալ, համաշխարհայնացումի ալիքին վրայ, «կը սփիլուքանայ» աստիճանաբար: Եղածը իրողութեան հաստատում մըն է, ո՛չ ժմտական երեւոյթի մը առջեւ ափսոսանքի հառաջանք...:

Եւ «սփիլուքացման» այս իրողութեան կամ հոլովոյթին համապատասխան՝ գոյութիւն ունին միջոցներ, զէնքեր: Որ պարզապէս պէտք է գտնել եւ գործածել զիտնալ: Պարզապէս:

Կերպոնականին «Նախ՝ Մայրենին»՝ այդ հոլովոյթը դիմագրաւելու քայլ մըն է — անկախ՝ տուեալ թքահայ միջավայրի մասնայտուկ պայմաններէն: Այս խորագիրը ուրեմն պիտի չընկալենք՝ մայրենի լեզուն նախ եւ առաջ ու առանձինը ուսուցանելու թիւրիմացական առումով: Ո՞չ:

Այլ՝ որ անիրածեցտ է, մեկնակետէն, մայրենին ուսուցանել այնպէս՝ ինչպէս տիրող/տեղական լեզուն(երը), այսինքն, անդամ մը եւս, նոյն կենդանութեամբ, նոյն մեթոսաբանական լլջութեամբ ու որակով:

Ասիկա՝ անպայման՝ «օտարախօս» համայնքներու երկեցու համակարգերուն մէջ: Ու աւելցնենք՝ նոյնեւան՝ «անպայման»՝ Արեւելքի դեռ հայախօս համայնքներուն մէջ:

* * *

Ահա՝ ի՞նչ խորհրդածութիւններու դուռ կը բանայ Պոլսոյ մեր կերպոնական վարժարանի գրքոյկը: Ցուսալի՝ մէկ կողմէ, մանաւանդ երե կու գայ համայնքէ մը որ, ասսնամեակներով քաղաքական դժնալակ պայմաններ դիմագրաւած եւ մշակութապէս փաստորէն «սփիլուքացած», այսօր՝ իր մանկավարժական առաջապահ մէկ թեւով կը յայտարարէ պայքարի իր տրամադրութիւնը յօդուու ազգային մշակոյթի եւ մայրենի լեզուի պահպանման, վերականգնման, տեղական թէ համաշխարհային հարթիչ ճնշումներու դէմ: Միւս կողմէ, երեւոյթը տրուած առիթ մըն է, թո՛ղ ըլլայ մասամբ ջլատիչ առիթ, անդրադառնալու, թէ՛ որքան եւ ենի մնացած մայրենի լեզուի եւ մշակոյթի մեր պայքարին մէջ, ապահինած «տկարի գենֆին»՝ բարոյական պարտի եւ սոսկական պահպանումի կործանարար քարոզին — ասիկա՝ իր լայն ընդհանրութեան մէջ առած՝ թէ՛ հայախօսութենէ դադրած, եւ թէ՛ զգայազրիկի հայախօսութիւն մը պահած եւ հայախօս նկատուող մեր համայնքներուն մէջ:

Սփիլուքի երկրորդ-երրորդ սերունդներս՝ այսօրուան ծնողներու եւ մեծ-ծնողներու սերունդները, ածեցուեր ենք հայերէնը նիտի պարտ ներկայացնող, իբր աղբատ պագական հիւրընկալող տաղտկայարոյց այդ մժնոլորտին մէջ, պարխապով մը անջատուած առօրեային, անոր բնականութենէն, անոր ամբողջականութենէն...

Բայց «հայապահպանում» կոչուած վախկոս քարոզին, մեր մէջ տիրող աշխարհայեցք-գաղափարախօսուրեան «նուեր» այս խցանումը, որ այսօր կ'անդրադառնայ չորրորդ եւ հետեւող սերունդին/սերունդներուն վրայ, — անշրջանցելի չէ: Լեզուա-հոգեբանութեան եւ մանկավարժութեան նորոգուած հայեացքները թո՛ղ օգնեն մեզի զայն յաղթաշարեկու:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

- 1) Gilbert Dalgalian, «Enfances Plurilingues, Témoignage pour une Éducation Bilingue et Plurilingue», L'Harmattan, Փարիզ, 2000:
- 2) Jim Cummins, Թորոնթոյի համալսարան, "Bilingual Children's Mother Tongue: Why Is It Important for Education?"
- 3) Տևանել Սուէ Սարգսիստան-Ծինապահեանի պատասխան-խորիդապութիւնները Սելլա Թնանկեանի և Հուրիկ Թուխանեան-Ծէյքասի անակներուն, ինչպէս և պա եղուոքի անակներուը: Բոլորի արձարութիւններն ալ ըսա էութեան կը համբնկան երեխաններուն երկլեզու մեկնարկի կարեւորութեան մասին հոս արձանագրած դրոյթներու: Չեմ մոռնար նաև, որ վերջինները կ'արձագանգէին Պօրու Շահմելլիքեամի թշավացուեամ լու Անձնելու տեղի ունեցած կոր սեղանի մը նասին ու առթիւ («Ազդակ», յաջորդաբար՝ 12 փետրուար, 31 յունիար և 5 յունիւար 2013):

Հայերէնի հնչարանկան հարստութեան եւ առաւելութիւններուն մասին հիմնարարութեան բոնցմով Ս. Ս.-Ժ.ի պատասխանը բաւական ծանրաբեռն է, անշուշտ յարիթ են ու տեղին: Նոյնպէս՝ տիրող շարք մը լեզուներու հետ հայերէնի շարամիւ-

«ՇԾՈՒԿՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ»^(*)

Զարդերու նուիրուած գրականութեան քանակը մե՞ծ է արդեօք, եւ ընդհանրապէս «Զարդի գրականութիւն» կա՞յ:

Գիտեմ, որ գրութիւնները կարելի չեն խմբել ըստ թեմայի. ասովիս արշեատավարդութենէ հետու բան մը պիտի ըլլար, թէեւ կան հաւաքածոներ կամ ծաղկաքաղեր, ուր գրութիւնները ըստ թեմայի խմբուած են, ինչպէս սիրոյ կամ մայրութեան նուիրուած հաւաքածոները:

Հանդիպած եմ գիրքերու, նուիրուած մանաւանդ քսաններորդ դարուն իրագործուած ջարդերուն, սկսելով մեր Զարդէն, մինչեւ Ուկանտայի ջարդը:

Զարդի գրականութիւնը կը նշանակէ ուղղակի ջարդի մը նուիրուած գրականութիւն, այսինքն ջարդը իր ընթացքին մէջ նկարագրող գրականութիւն, ինչպէս «Հայ Գողգոթայ»-ն, որովհետեւ անոր հետեւանքներուն նուիրուած գրականութիւն մը այլ պիտակ պիտի ստանար, ինչպէս մեր «անապատի» կամ «որբութեան» սերունդի գրագէտներուն երկերը՝ «Մանկութիւն չունեցող մարդիկ», «Հացի եւ լոյսի համար», «Հացի եւ սիրոյ համար», «Սիրոյ եւ արկածի տղաքը» եւ այլն:

Զարդ մը իր ընթացքին մէջ նկարագրող երկերուն թիւը ստուար չէ, որովհետեւ նման փորձառութիւն մը արուեստի վերածելը գեհենին մէջէն կրկին անցնիլ պիտի նշանակէր, տառապանք մը, որուն ոչ արդիւնքը, ոչ ալ որակը կարելի չէ տեսականորէն ապահովել:

Յատակ է եւ բոլորին ծանօթ՝ Յա-

կոր Օշականին Հալէպ գալու շարժառիթը, որուն նպատակը քալելն էր գաղթի ճամբաներէն մինչեւ Տէլ Զօր եւ Մարկատէ, նկարագրելու եւ ամբողջացնելու համար «Մշնացորդաց»ի վերջին, երրորդ հատորը, որ «Դժոփաք» պիտի կոչուէր: Այս ծրագիրը սկայան իրագործում չունեցաւ, որովհետեւ Յ. Օշական չդիմացաւ այդ գժիմութիւնը վերապելու, կրկին ապրելու աննկարապելու, տառապանքին: Եւ տառապանքը իրապէս մնաց աննկարապրելի:

Ստենին գրած էի Միջէլ Մարքոմ-Ահարոննեանի «Եւ երկինքն երեք ինձոր ինկաւ ...»⁽¹⁾ գեղարուեստական գործին մասին, որ մեծ յաջողութեամբ կը նկարագրէր սարսափ մը, զոր վերյիշելն իսկ կրնայ ծանր հետեւանքներ ունենալ զայն ապրողին կամ առաջին ձեռքէ լողին համար: Բայց Մարքոմ-Ահարոննեան, որ մօր կողմէ միայն հայ է, ունեցած է պերճանքը այդ կէս «ոչ-հայ» ութեան կարենալ «գուրսէն» գրելու համար Զարդը: Նոյնանման վիճակի արդիւնք է Էտկար Հիլզուրաթի «Վերջին մտքի հէքեաթը» վէպը, որուն հրեայ-լեհ հեղինակը նկարագրած է հայկական ջարդերը, եւ այդ ձեւով տուած իր պարտքը իր ազգի տառապանքին՝ Հոլորոսթին:

Նոյն ծիրին մէջ կ'իյնայ Վարուժան Ուկաննեանի «Շշուկների Մատեան» վէպը, գրուած ուումաներէնով, հրատարակուած Ռումանիոյ մէջ, քանի մը մրցանակներու արժանացած եւ թարգմանուած բազմաթիւ լեզուներու:

Այս գիրքին հայերէն թարգմանու-

թիւնը կատարուած է Սարգիս Սելեանի կողմէ, հեղինակին միջամտութեամբ, եւ հրատարակուած երեւան՝ 2012-ին, Հայաստանի Գրողներու միութեան կողմէ, Պուբրէշի (Բովսարեստ) Արարատ հրատարակութեան համագործակցութեամբ: Թէեւ հեղինակին՝ Վարուժան Ուկաննեանի կեանքի սկզբնական ըրջանը կարելի է գտնել այս գիրքին մէջ, կը ներկայացնենք զինք մեր ընթերցողին, ամբողջական պատկեր մը տալու համար Սիրութի օտարագիր լաւագոյն գրիչներէն մէկուն մասին, որ գժեախտարա անծանօթ կը մնայ մեզի:

Ծնած է Ռումանիոյ Կայովա քաղաքը, 1958-ին: Մանկութիւնն ու պատանութիւնը անցած են ֆոլշան քաղաքին մէջ, ուր աւարտած է երկրորդական ուսումնական կիսութիւններուն եղած է Ռումանիոյ կողմէ մաթեմաթիկի բաժիններէն:

Ռումանիոյ գրողներու միութեան առաջին փոխ-նախագահան է: 2006-2008 թուականներուն եղած է Ռումանիոյ ելեմտական նախարարը:

Ունի բանաստեղծութիւններու երեք հատորներ՝ «Կապոյտ շամանը», «Թագուէիին սպիտակ աչքը» եւ «Հազար թեւերով թիսուսը». ունի նաև պատմուածքներու հաւաքածոյ մը՝ «Կոմանտորի արձանը», որուն համար արժանացած է իր երկրի Գրողներու միութեան մրցանակին:

Վարուժան Ուկաննեան կը պատմէ իր մեծ-հօր յուշերը, իր լսածներէն, տեսածներէն եւ տպաւորութիւններէն ելեկով:

Հետեւաբար գիրքը կը կենայ

^(*) Վարուժան Ուկաննեան, Շշուկների մատեան, ՀԳՄ հրատարակութիւն, Երևան 2012

սական նմանութիւններու կարելի բարիքին նշումը: Սատնք առաւելութիւններու են: Բայց հաւաճօրէն երկելուութեան թյածարպը այդ բոլորին կարիքն ալ չունի իր բեղմնառութիւնը գործարկելու – եւ փաստելու – համար: Կանուս երկելուութիւնը կրնայ յադրահարել նոյնիկ անապատենութիւնները այլանջին կամ տարեր շարահիւսուող լեզուներու, ինչպէս մեր անմիջական շրջապատէն յունարէնը, սպաներէնը, արաբերէնը...:

- 4) Օտարախօս միջափայրի մէջ հայերէնի ուսուցման մասին, կարելի է շահեկանութեամբ կարդալ Ժիրայր Զոլաքեանի վերլուծական յօդածածը՝ «Հայերէնը՝ Միավելութեան բերդերուն դիմաց», «Յառաջ - Սիրո եւ Արուեստ», 5 հոկտ. 2008, Փարիզ:

Նոյն Ժ. Զոլաքեանն է որ, «Յառաջ» օրաթերթի մէջ, նոյն տարիներուն, արձարած է մանկանութեան կարեւորութեան ու կարելիութեան հարցը, միշտ հիմնուած Ֆրանսայի մէջ տասնամեկներու իր մանկավարժական բեղմնաւոր փորձին վրայ:

- 5) Այս մտահոգութիւններուն հետ լրի համեմենող հաւանական Քիլենամենանի «Դիշո՞ւ հայերէն խօսիլ» յօդածածը, որ կը շնչառէ լոգ-

ուի նաև դպրոցէն դրս, կեանքի մէջ ամբողջական օգտագործման անհրաժեշտութիւնը: Ասպ և ասոր ծալակից մերժմանը հանդերէն և անոր աւանդում-իրացումը իր ազգային-բարյանական պատու ընկալելու տիսուր ունին, շեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը վկայաբերէ իր կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

Սոնիա Ք.-Ա., վերլուծական մատնանշութեան գուգահեռ, կը կարգին Միաց. Նահանգներէն լեզուարան մը՝ Josua Fishman (որ – ի դէպ – թերեւս գիտական իր շահագրութիւններուն կը միացնէ: նաև էթոնիք/փորբանանական պատու ընկալելու տիսուր ունին, դեշտումը անոր վնասաբերութեան («Հորիզոն շարապաթերթ», 24 մարտ 2014):

վաւերական գործի մը եւ վէպի մը մի-
ջեւ տեղ մը, տարածք մը, զոր հեղի-
նակը յաճախ կը փորձէ նկարագրել,
ճշգել, անուանել այս գիրքին գրեթէ
հինգ հարիւր էջերուն վրայ.

«Շշուկների մատեանը ոչ թէ
պատմութեան դասագիրք է, այլ՝ խղճի
փիճակների գիրք»:

«Այն (ՇՄ գիրքը) աւելի շուտ
սաղմուսների ժողովածու է, որովհետեւ
ընդհանրապէս պարտուղների մասին
է խօսում»:

«Ուրեմն անսպասելի բաների
մասին խօսելը նման է Շշուկների մատ-
եանը գրելուն: Շարագրել այս ամենը,
ինչից ցանկանում էին խուսափել, նշա-
նակում է Շշուկների մատեանը հակա-
ռակ կողմից գրել»:

«Բայց թերեւս, իր խորին խոր-
քում Շշուկների մատեանն սկսում է
մի այլ գրքով — քանզի այնպէս, ինչ-
պէս մարդիկ են ծնւում մարդկանցից,
գրքերն էլ գրքերից են ծնւում ու յետոյ
առանձին մեծանում — հազար տարի
առաջ Գրիգոր Նարեկացու գրած մի
գրքով, որը կոչւում է Մատեան ողբեր-
գութեան: ... յաճախ ողբը համարւում
էր ժամանակների միակ դարմանը ...:
Այն, որ գիրքն անուանուել է Մատեան
ողբերգութեան, իսկ սա՝ Շշուկների
մատեան, չի նշանակում, որ ողբից գէ-
պի շշուկ ճամբան ապաքինման ուղի է
եղել: Այդ ողբից մինչեւ այս շշուկները
մի տառապանք ուրիշով չի փոխարին-
ւում, այլ տարբերութիւնը միայն ողբի
ու լուելեայն ողբի մէջ է»:

«Շշուկների մատեանն ինչ որ չա-
փով արտասովոր է, որովհետեւ, ի տար-
բերութիւն այլ պատմութիւնների, այս-
տեղ մահն ընդամէնը մի մանրամասնու-
թիւն է, իսկ մահից, ուրեմն նաեւ կեան-
քից աւելի կարեւոր՝ յշշողութիւնն է»:

Հեղինակը կ'անդրագառնայ նա-
եւ խորագրին ու կ'ըսէ: «Մանկու-
թեանս տարբիներին շշուկների ինչ-որ
աշխարհում ապրեցի: Նրանք արտա-
բերում էին զգուշօրէն: Միայն աւե-
լի ուշ իմացայ, որ շշուկը նաեւ այլ
իմաստներ ունի, ինչպէս օրինակ
քնքուշութիւնը կամ աղօթքը»:

«Ի՞նչ կ'ըսես շշուկով:

—Կը կարդամ, — պատասխանում
էր Կարապետ մեծ-հայրս:

—Ինտո՞ր կը կարդաս: Ո՞ւր է
գիրքը:

—Ալ պէտք չունիմ, գոյ գիտեմ:

—Լաւ, բայց ի՞նչ անուն ունի
այդ գիրքը, ո՞վ գրած է:

—Կարելի է գուն, օր մը:

ինչ որ ահա այժմ անում եմ: Եւ

այդպէս էլ անուանում եմ՝ Շշուկների
մատեան»:

Կարապետ մեծ-հայրը գլխաւոր
հերոսն է այստեղ, բայց մանաւանդ
գլխաւոր շարժառիթն է եւ մղիչը այս
գիրքին, որ ձեւով մը տապանաքար
է անոր ընտանիքին եւ բազմահազար
անշիրին մնացած մեռելներուն, որոնց
յուշը կը հետապնդէ վերապրողները:

Հեղինակը ոչ միայն կը պատմէ,
այլ կը փորձէ հասկնալ շշուկներուն
ծագումը, պատճառը, տառապանքի մը
լուռած ձայնը կը փորձէ լսել, կամ այդ
լուռած ձայն տալ.

«Շշուկների մատեանը մի պատ-
մութիւն է, որը ոչ ոք լիովին չի պատ-
մում, կարծեա ամեն մէկը վախենում էր
ամբողջովին հասկանալ՝ այդպիսով փոր-
ձելով փրկել իր իմաստագուր կեանքը»:

Հեղինակը կամ պատմէիչը այս
շշուկներուն սովորական հեղինակի մը
նման դուրս չէ իր պատումէն, խստո-
րէն առնչուած է պատմութեան, որով-
հետեւ շշուկները հասկնալու ի՛ր ճիգին
մէջ է թէ մեծ-հօր եւ թէ իր փրկու-
թիւնը, որպէս մարդ, հայ մարդ, ու մա-
նաւանդ որպէս յիշատուկ ամբողջ ազ-
գի մը մոռցուած զաւակներուն:

«Որքան աւելի քիչ էին ուրիշները
նրանց յիշում, այնքան աւելի լաւ էր»:

Ի վերջոյ այսօր եւս, գրեթէ դար
մը եսք, հայերը կը շարունակեն չհասկե-
նալ Ձարդին էութիւնը, անոր անչափելի
տարողութիւնը, մանաւանդ մարդկային
դիտանկիւնն. իսկ ասիկա «կ'արգիլէ մե-
զի որ ապրինք», ինչպէս պիտի ըսէր Վահէ
Օշական ջարդերէն կէս դար ետք: Շշուկ-
ները հասկնալու ճիգը ոչ միայն մատեան
է, այլ անցեալին հետ ապրելու միջոց:

Գիրքը բաժնուած է տասներկու
գլուխներու, որոնցմէ ութերորդ գլուխը
նուիրուած է Ձարդի նկարագրութեան
եւ ունի եօթ օղակներ, որոնք «Եռաւու-
ֆի պատմութիւնը» կը կազմեն:

Եռաւուֆը Սահակ Շէյթանեանին
— Կարապետ մեծ-հօր մտերիմ բարե-
կամներէն մէկը — զինք գնած արաբին
կողմէ տրուած անունն է, որ ժամանա-
կին հետ կը դառնայ անոր alter ego-ն եւ
անսպասելի պաշերու մէջ յայտնուելով,
երբեմն կը տառապեցնէ զինք, երբեմն կը
դառնայ յուշարարը Սահակի յաղթանա-
կին՝ մահուան եւ տառապանքին վրայ:

Ամբողջ այս գիրքը յաղթանակի
պատմութիւն մըն է, հակառակ անոր,
որ ինչ որ պատմուած է այնտեղ կը խօ-
սի Ձարդին եւ անկէ բիսած ու շարու-
նակուող այլ տեսակի տառապանքնե-
րու մասին: Բայց երբ մարդկի հակա-
ռակ ամէն բանի կը շարունակեն ապրիլ,

կը ձգտին բարելաւել իրենց կեանքե-
րը, կընտելանան մահուան հետ, միայն
կրնան յաղթած ըլլալ անոր.

«... մահը երկար ժամանակ
գաղթականների հետ ապրելով, սկսել
էր նրանց սիրել»:

«... մահանալու մտքի հետ հաշտե-
ցումն էր իրենց սարսափեկի ուժն էր»:

«Մահը, թափառելով ճամբարում,
դարձել էր նրանցից մէկն ու Դէյր էզ-
Զորի օղակների զոհերից մէկը լղաւ»:

Այս գլուխին մէջ — որ ուղղակի
ջարդերուն նկարագրութիւնն է — կան
եօթը օղակներ: Այս «օղակ» բառը մինա-
կը արդէն անմիջապէս կ'առնչուի Տանթէ
Ալլեկիերիի «Աստուածային կատակեր-
գութիւն» գործի Դժոխք-ին, որ իննը
օղակներ ունի: Ալնչութիւնը յստակօ-
րէն կը նկարագրէ հայերուն ապրած եօթը
օղակներով գծովիքը, որ գրեթէ չի տար-
բերի Տանթէի Դժոխքէն իր ահաւորու-
թեամբ:

Գիրքը խճանկար մըն է տար-
բեր մարդոց կեանքերու, որոնք իրա-
րու կը զօդուին հեղինակին նախ յիշո-
ղութիւններով, ապա՝ գրիչով: Հետեւա-
բար գիրքին կառոյցը վէպի մը ընկալ-
եալ կաղապարներուն մէջ կարելի չէ
դիտել: Եւ ինչպէս իւրաքանչիւր տա-
ղանդաւոր հեղինակ, Վարուժան Ոս-
կաննեան եւս իր վէպին կառոյցն ու հոն
մտնելու բանալիները իր հետ կը բերէ:

Գիրքը նաեւ ուրուագիծ մըն է
Սփիւրքի գաղութներէն մէկուն ծնուն-
դին, երբ գաղթականները կամաց-կա-
մաց քաղաքացի կը դառնան եւ կար-
ծես բնագուով հունի մէջ կը դնեն
«ազգային»ի նմանող առօրեայ մը:

Հեղինակը սքանչելի դիմանկար-
ներ վրձինած է, երբեմն մէնագրու-
թիւններու հասնող ծաւալով, մեր պատ-
մութեան ամենէն կարեւոր գէմքերուն,
ինչպէս Դրոյի եւ Միսաք Թորլաքեա-
նի մասին գրուած էջերը, որոնք գուր-
սու գան պաշտօնական կենսագրու-
թիւններու սահմանէն եւ կը ներկայաց-
նեն մարդը իր մտերմութեան, իր ցա-
ւերուն, վախերուն, իր յատկութիւննե-
րուն եւ թերութիւններուն մէջ այսպի-
սով անոնց վերագարձնելով նաեւ իրենց
մարդկային դիմագիծը, որ յաճախ կը
ծածկուի հերոսի դիմակին տակ:

Հակառակ անոր, որ գիրքը պատ-
մական շատ ծանր իրագարձութեան
մը՝ Մեծ Եղեռնին շուրջ կը հիւսուի,
սակայն էջերուն մէջ ցանցուած հե-
ղինակին շատ նուրբ երգիծանքը յա-
ճախ կարելի կը դարձնէ, որ ընթերցողը
առանց ընկճուելու շարունակէ ընթեր-
ցումը: Այս առումով հետապնդական

են տողերը «ուժիւն»ի մասին, որուն մենք, որպէս արեւմտահայերէն խօսող հայեր, չէինք անդրագարձած.

«Խօսում էին երկարաձգելով վանկերն ու կլորացնելով կարեւոր բառերը, որոնք հայերէնում ընդհանրապէս «ուժիւն» վանկով են վերջանում, վերացական բառեր, որոնք յուշում էին, որ նրանք պատրաստ էին աւելի շուտ քննարկելու, քան որոշելու, ուր մնաց՝ գործելու»:

«Այդպէս, կրակի շուրջը, Վիրայի անտառներում ձմեռը Հարթին Ֆրինկեանն ու Կրիստէ Պարաջինըն բարձր քաղաքականութիւն էին վարում՝ Կրիստէյի սուխով ու ծերունու հովուական մահակի ծայրով նոր քարտէսներ գծելով, որտեղ ոռուսներն ու Կարմիր բանակը նահանջում էին դէպի տափաստաններ, իսկ Դաշնակիցներն Արեւելեան Եւրոպան ու Բալկաններն էին գրաւում»:

Գիրքը կը բացուի Կարապէտ մեծ-հօր խօսքով՝ «Մենք կը տարբերինք ոչ անով ինչ որ ենք, այլ այն մեռելներով, որոնց վրայ ամեն մէկս կ'ողբայ»: Ասիկա հեռու արձագանդ մը կը բերէ Թուլպթոյի «Աննա Քարենինա»յէն՝ «Բոլոր ուրախ ընտանիքները նման են, բայց իւրաքանչիւր դժբախտ ընտանիք դժբախտ է իր ուրոյն ձեւով»:

Նման բանդիտութիւններ եւ հեռահար յղումներ կարելի է գտնել այս տեղ, ինչպէս է օրինակ Պախի պարագան.

«Փաստօրէն «Շուկների մատեան»ն իր խորքում նոյնն է մնում բոլոր ժամանակների համար, ինչպէս եռան Սերաստիան Բախի մի խմբերդ, ինչպէս մի նեղ դուռ, որից մարդիկ անցնում են կուանալով կամ մէկը միւ-

սին սեղմուած»:

Այս «նոյնն է մնում» խօսքէն կարելի է նաև հետեւցնել, որ գիրքը շարունակութիւն մըն է հայոց պատմութեան, որ կ'ուրուագծէ մեր հին պատմութիւնը հասնելու մինչեւ նոր շրջան եւ թանձր գիծերով նկարագրելու պատմութեան նոր շերտ մը, որ գրեթէ նոյնն է գաղութէ գաղութ: Աւենին նոյն գիտակցութիւնն ու յանձնառութիւնը ունեցած են «Փարիզի տղաքը»ը, երբ իրենց առօրեան նկարագրած են, քաջ գիտակլով որ ատիկա իրապէ՞ս մեր այսօրուան «պատկերագրով պատմութիւն հայոց»ն է:

Կը տեսնենք, որ հեղինակը բնաւ չի վարանիր իր գիրքին՝ զուգահեռներ գծելու գրականութեան կամ երաժտութեան ամենէն մեծ անուններուն՝ Նարեկացիի կամ Բախի հետ: Իր կարողութիւններու գիտակցութեան կողքին շատ հաւանաբար կայ այլ գրդապատճառ մը այստեղ՝ շատ բարձր գնահատել ոչ միայն անչափելի տառապանքը իր ժողովուրդին, այլ նոյնքան եւ աւելի գնահատել անոնց վերապրումի հսկայ կարողութիւնը եւ այդ առումով այս գործը դնել — որովհետեւ այդ է որ կը ներկայացնէ — այլ մեծ գործերու կողքին:

Վէպին կառոյցը իր հետ հետաքրական նորութիւն մը կը բերէ՝ հեղինակը ըլլալով մէկը վէպին գործող անձերէն, որպէս պատմիչն ու երբեմն թարգմանը միւս հերոսներուն, միաժամանակ է նաեւ հեղինակը գիրքին: Հետեւալար երբեմն մեղի կը ներկայացնէ նաեւ իր «խոհանոցային» աշխատանքը, իր մտորումները գիրքին, գրու-

թեան եւ գրելիքի ընարութեան մասին.

«Ճիշդ է, որ Շուկների մատեանում բազում ճշգրիտ թուականներ կան, որոնք օրը, ժամը եւ տեղն են նշում: Գրիչը շատ արագ է շարժում, բայց երբեմն որոշում է կանգ առնել՝ ինձ եւ ընթերցողին սպասելով, իսկ այդ ժամանակ գուցէ մանրամասնում է աւելի, քան անհրաժեշտ է: Իւրաքանչիւր յաւելեալ բառ պարզաբանում է, սակայն հենց այդ պատճառով նուազեցնում իմաստը»:

Ժամանակին թուրք գրագէտ մը, որուն անունը միտքէս կը վրիպի ճիշդ այս պահուն, ըսած է՝ «հեթէ մենք մեզ ճանչնալ կ'ուզենք, պէտք է Յակոբ Օշական կարդանք»:

Այսօր կ'ըսեմ՝ սփիւրքահայը ինքինք, իր պատմութիւնն ու մանաւանդ այդ պատմութեան հոգեբանական շերտը ճանչնալու համար, պէտք է Շուկների մատեանը կարգայ. բայց կարգայ նաեւ ապրելու համար անդոհանք մը, որ շատերէս կը վրիպի, բայց զոր պէտք է իմանանք, որպէս իթան մեր պահանջներուն:

«Շուկների մատեան»ը այսօր մեզի համար եւս կը ձեւակերպէ նոյն հարցումները, որոնք տառապեցուցեր էին մեր ժողովուրդը, մանաւանդ այդ հարցումներէն մեծագոյնը, որ ոչ միայն մեզի, այլ ընդհանրապէս մարդ արարածին համար կը շարունակէ գոհացուցիչ պատասխան մը չունենալ՝ ինջո՞ի:

«Մեծ պատասխանատուութիւն է ապրիլ այս երկրի վրայ աւելի շատ, քան Յիսուս Քրիստոսը՝ ասում էր մեծ հայրս: Պէտք է հաստատ պատճառներ ունենաս, որպէսզի համարձակիս ընել ատիկա»:

Վարուժան Ուկանեանը գեղեցիկ կերպով ներկայացուցած է մեզի իր «Հաստատ պատճառները» ընելու ատիկա:

ՄԱՐՈՒԾ ԵՐԱՄԵԱՆ

Մայիս 2014

Պատերազմական Հալել

1) «Յառաջ» «Միտք եւ Արուեստ», թիւ 316:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դանիէլ Արսան, ԱՅԴՊԻՍԻ ՄԻ ԱՊՐԻԼ ԱՄԻՍ ԱԴԱՅՈՒՄ (հատուած վեպից)Էջ 1
Մահացաւ բանաստեղծուի Ալիսիա ԿիրակոսեանԷջ 4
Վաստակաշատ մտաւորական Պօղոս Սնապեան կիցեց իր մահկանացունԷջ 5
Մարի Ռոզ Արուսէֆեան, ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ ՄԱՐԴԻՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԸԷջ 6
Սագօ Արեան, ՈՐՓԵՍ ՊՍԱԿ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ ՇԵՐԻՄԵՒՆԷջ 9
Յարութիւն Քիւրքնեան, «ՆԱԽԱՄԱՐԴԻՆ»Էջ 10
Մարուշ Երամեան, «ՇՇՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ»Էջ 14

Հոգիզոն Դրական

Լոյս կը տեսնէ ամեն ամիս, 1984-ի դեկտեմբերէն սկսած

Խմբագիր՝
ՎԻԳԻՆ ԱԲՐԱՅԱՍԵԱՆ
Աւագ Խմբագիր՝
ՎՐԵՄ-ԱՐՄԵՆ ԱՐԹԻՆԵԱՆ

Գործակիցներ՝
ՍԻՐԱ ԱԲՐԱՅԱՍԵԱՆ
ՍԻՐԱՆՈՅՑ ԴԻՇԵԱՆ (Երեւան)
ԵԼԻԶԱ ՉԱԲՄԱՔԵԱՆ

SUPPLÉMENT LITTÉRAIRE

Année XXX. n° 6 (358) juin 2014

HEBDOMADAIRE ARMÉNIEN

HORIZON

3401, Olivier-Asselin, Montréal

Québec, Canada H4J 1L5

Tél.: (514) 332-3757

Fax: (514) 332-4870

editor@horizonweekly.ca